

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ  
ՊԱՅՊԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՍԿՊՀ)  
ՀԱՇՎԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏ

ՀԱՅԱՍՏԱՆ

հունիս 2008թ.

# Բովանդակություն

---

Համառոտ ամփոփագիր.....	iii
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	1
II. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԵՆՔԸ .....	3
Ա. Կանոնակարգման դաշտը.....	3
Ա.1. Հաշվապահական հաշվառման ու ֆինանսական հաշվետվողականության կանոնակարգման դաշտը .....	3
Ա.2. Աուդիտի կանոնակարգման դաշտը .....	13
Բ. Հաշվապահության և աուդիտի մասնագիտությունները .....	15
Բ.1. Հաշվապահության մասնագիտությունը .....	15
Բ.2. Աուդիտի մասնագիտությունը .....	19
Գ. Մասնագիտական կրթությունը և ուսուցումը .....	21
Դ. Հաշվապահական հաշվառման ու աուդիտի ստանդարտների սահմանումը .....	24
Ե. Հաշվապահական հաշվառման ու աուդիտի ստանդարտների կիրարկումը .....	28
Ե.1. Հաշվապահական հաշվառման (ֆինանսական հաշվետվողականության) ստանդարտների կիրարկումը .....	28
Ե.2. Աուդիտի ստանդարտների կիրարկումը .....	32
III. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ՝ կազմը և պրակտիկ կիրառությունը .....	34
IV. Աուդիտի ստանդարտներ՝ կազմը և պրակտիկ կիրառությունը .....	39
V. Ֆինանսական հաշվետվողականության որակի վերաբերյալ կարծիքները .....	41
VI. Ոլորտային քաղաքականության վերաբերյալ առաջարկներ .....	42
Ա. Կանոնակարգման դաշտ .....	44
Բ. Ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման միջոցառումներ	46
Գ. Մասնագիտական կրթություն և ուսուցում .....	47

## Հանառոտ ամփոփագիր

---

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են Հայաստանում ձեռնարկատիրական և ֆինանսական գործունեության բնագավառների հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի պահանջներն ու պրակտիկան: Հաշվետվությամբ որպես համեմատման ուղենիշ կիրառվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ), որ նախկինում կոչվում էին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ, և Աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ), զուգահեռներ է անցկացնում հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում միջազգային փորձի և լավագույն պրակտիկայի, այդ թվում՝ Եվրամիության (ԵՄ) անդամ երկրների հետ՝ ֆինանսական տեղեկատվության որակը գնահատելու և ոլորտային քաղաքականության վերաբերյալ առաջարկներ կատարելու նպատակով:

Բարձրորակ ֆինանսական հաշվետվողականությունն էապես նպաստում է.

- Գործարար միջավայրի բարելավմանը, մասնավոր հատվածում տեղական և օտարերկրյա ուղղակի ու պորտֆելային ներդրումների խթանմանը.
- Եվրոպական և համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրմանը.
- Բանկային ու ոչ բանկային ֆինանսական հատվածների կայունության և նրցունակության ամրապնդմանը, վարկերի մարման հետ կապված խնդիրներով ու անբավարար կապիտալիզացիայով պայմանավորված ճգնաժամերի ռիսկի նվազեցմանը.
- Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկություններում թափանցիկության ավելացմանը, ինչը բաժնետերերին ու հանրությանը հնարավորություն կընձեռնի գնահատել ղեկավարության գործունեությունն ու ազդել նրա վարքագծի վրա.
- ՓՄՁ-երի համար վարկային միջոցների մատչելիության բարձրացմանը՝ խրախուսելով գրավի վրա հիմնված վարկավորման որոշումներից անցումը պոտենցիալ վարկառուների ֆինանսական ցուցանիշների վրա հիմնված որոշումներին՝ դրանով իսկ նպաստելով ՓՄՁ-երի հատվածի աճին:

## **Քաղաքական և տնտեսական համապատկերը**

Հայաստանը նախագահական կառավարմամբ, ներկայացուցչական ժողովրդավարության հանրապետություն է, որտեղ մեկ շնչի հաշվով<sup>1</sup> համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) կազմում է 1.930 ԱՄՆ դոլար, իսկ բնակչությունը՝ շուրջ 3 միլիոն մարդ<sup>2</sup>: Հայաստանի ՀՆԱ-ն ցուցաբերում է կայուն աճի տեմպեր՝ 2000-2006թթ. ժամանակահատվածում աճելով ավելի քան 100 տոկոսով<sup>3</sup>:

## **Հաշվապահական հաշվառման ու աուդիտի բարեփոխումները Հայաստանում**

Հայաստանում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության ներկայիս օրենսդրական դաշտի պահանջների համաձայն, ֆինանսական հաշվետվողականության նպատակով բոլոր ընկերությունները՝ անկախ չափից, պարտավոր են կիրառել Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՍ) (2001 թվականի դրությամբ ՀՀՄՍ-երը՝ որոշ ոչ էական փոփոխություններով), իսկ փոքր ընկերությունների համար հաշվետվողականության ավելի մեղմ պահանջներ նախատեսված չեն: Փոքր ընկերությունների համար հաշվետվողականության ավելի մեղմ պահանջների բացակայությունը բնութագրական է նաև Հայաստանում աուդիտը կարգավորող օրենսդրական դաշտի համար: Գործող օրենսդրությամբ նախատեսվում է, որ բոլոր բաժնետիրական ընկերությունները, իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ստուգման համար կարող են ներգրավել աուդիտորի: Հաշվապահական հաշվառման ու աուդիտի գործառույթները կարգավորող օրենսդրությունում ընկերությունների չափով պայմանավորված տարբերակման բացակայությունը լրացուցիչ ճնշում է գործադրում այդ բնագավառի՝ դեռևս կազմավորման փուլում գտնվող միջավայրի վրա և կարող է խոչընդոտել բարձրորակ ֆինանսական տեղեկատվության ձևավորմանը:

Աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ) ընդունվել և աուդիտորների կողմից կիրառվում են որպես Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներ (ՀՀԱՍ): Այդուհանդերձ, ինչպես հաշվապահական հաշվառման ստանդարտների դեպքում, ԱՄՍ-երի թարգմանության և որպես ՀՀԱՍ-եր ընդունման միջև ընկած ժամանակային միջակայքերը հանգեցնում են ԱԵՄՍԽ-ի կողմից հրապարակված վերջին ԱՄՍ-երի և Հայաստանում

<sup>1</sup> Ըստ Համաշխարհային բանկի՝ Ատլասի մեթոդով հաշվարկված Համաշխարհային զարգացման ցուցանիշների (2006թ.):

<sup>2</sup> Բնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային բանկի՝ 2005 թվականի դրությամբ Համաշխարհային զարգացման ցուցանիշներից (վերջին տվյալներ):

<sup>3</sup> ՀՆԱ-ի (տարեկան տոկոսային) աճը 2000-2006թթ. ժամանակահատվածում ավելացել է 6-ից մինչև 13 տոկոս:

աուդիտորների կողմից կիրառվող ստանդարտների միջև տարբերություններին:

Ներկայումս հաշվապահության և աուդիտի մասնագիտությունների կարողությունները Հայաստանում գտնվում են ցածր մակարդակի վրա: Շուրջ 150 մարդ ունի Ֆինանսների նախարարությունից ստացված հաշվապահի որակավորման վկայական, իսկ 75 մարդ՝ աուդիտորի որակավորման վկայական: Մասնագիտական ասոցիացիաների անդամակցող և/կամ միջազգայնորեն ճանաչված որակավորումների ստացման գործընթացներին մասնակցող մասնագետները փոքրաթիվ են: Սա հետևանք է այն բանի, որ Ֆինանսների նախարարությունը չի ճանաչում մասնագիտական ասոցիացիաների կողմից շնորհվող որակավորումները: Բացի այդ, պրոֆեսիոնալ աուդիտորների փոքր քանակը կարող է մասամբ բացատրվել Ֆինանսների նախարարության՝ 2001-2006թթ. ժամանակահատվածում մասնագիտական հավաստագրման քննություններ չանցկացնելու որոշմամբ:

Ներկայումս ձեռնարկվում են հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի բարեփոխմանն ուղղված միջոցառումներ՝ Հայաստանի աճող տնտեսության և հաշվապահական հաշվառման ու աուդիտի միջավայրի առջև ծառայած մարտահրավերներին դիմագրավելու նպատակով: Այդ միջոցառումների թվում է հաշվապահական հաշվառման ու աուդիտի վերաբերյալ նոր օրենքների ընդունման նախաձեռնությունը, որոնցով, ԵՄ-ի Ընկերությունների մասին օրենքի վերաբերյալ ութերորդ դիրեկտիվի հիման վրա, հաշվապահական հաշվառման ու աուդիտի մասնագետներից կպահանջվի լրացնել շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) նվազագույն ժամաքանակ, և կստեղծվի մասնագիտության նկատմամբ հսկողության պետական մարմին: Հաշվապահական հաշվառման ու աուդիտի վերաբերյալ այս օրենքներով կնախատեսվի նաև ՖՀՄՍ-երի նոր թարգմանությունը, որոնք կընդունվեն որպես ՀՀՀՀՍ-եր:

**Ֆինանսական հաշվետվողականության ու աուդիտի կանոնակարգման և օրենսդրական դաշտի հետ կապված՝ առաջարկվում է հետևյալը.**

- Սահմանել ֆինանսական հաշվետվողականության եռաստիճան համակարգ՝ հանրային շահ ներկայացնող ընկերություններից (ՀՇՆԸ) պահանջելով լիարժեքորեն համապատասխանել ՖՀՄՍ-երին, փոքր և միջին ձեռնարկություններից (ՓՄԶ)՝ մասնավոր ընկերությունների համար սահմանված ՖՀՄՍ-երին (երբ վերջիններս առկա լինեն, և դրանց բարեհաջող ներդրման համար տրվի բավարար ժամանակ), իսկ միկրոձեռնարկություններից պահանջելով ապահովել բացառապես հարկային նպատակներով ներկայացվող հաշվետվություններ: Բոլոր ձեռնարկությունների համար, ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվողականությունը և կարգավորման նպատակով ներկայացվող

(այդ թվում՝ հարկային) հաշվետվությունները պետք է կառուցվեն այնպես, որ դրանց միջև տարբերությունները սահմանափակվեն ոլորտի պետական քաղաքականության ողջամիտ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ չափով, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել լրացուցիչ հաշվետվողականության բեռը և պետական կարգավորման պատկան մարմինների իրավասությունների կիրառումն ուղղորդել շուկայում հասանելի հրապարակային ֆինանսական տեղեկատվության որակի բարձրացմանը.

- ՀՀՀՀՄ-երը փոխարինել ՀՀՄՄ-երի արդիական թարգմանությամբ և ապահովել ՀՀՄՄ-երի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանության կայուն գործընթաց՝ նկատի ունենալով լիարժեք ՀՀՄՄ-երի կիրառման նպատակահարմարությունը և հաշվի առնելով հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի այլ բարեփոխումների համեմատական կարևորությունը.
- ՀՀԱՄ-երը փոխարինել ԱՄՄ-երի արդիական թարգմանությամբ և ապահովել ԱՄՄ-երի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանության կայուն գործընթաց.
- Ներկայումս ստեղծվող ընկերությունների ռեգիստրը պետք է նաև ունենա իրավասությունների բավարար շրջանակ ու կարողությունների պատշաճ մակարդակ, որպեսզի իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջին ենթակա ընկերությունները ռեգիստրին ներկայացնեն այդ հաշվետվությունները՝ դրա համար սահմանելով որոշակի ժամկետ:

**Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության օժանդակմանն ուղղված ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման միջոցառումների հետ կապված՝ առաջարկվում է հետևյալը.**

- Ֆինանսների նախարարությանն անհրաժեշտ է իր՝ հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի կարգավորման որոշ գործառնություններ, ինչպիսիք են պրոֆեսիոնալ հաշվապահների ու աուդիտորների որակավորումը և աուդիտի որակի նկատմամբ վերահսկողությունը, պատվիրակել մեկ կամ մի քանի մասնագիտական կազմակերպությունների. ըստ այդմ, ՖՆ-ը կարող է վերանայել իր դերը՝ ստանձնելով մասնագիտության նկատմամբ հսկողությունն իրականացնողի գործառնությունը, ինչն ավելի է համապատասխանում ԵՄ-ի Ընկերությունների մասին օրենքի վերաբերյալ ութերորդ դիրեկտիվին, հաշվի առնելով նաև նախատեսվող Հաշվապահների և աուդիտորների պալատի ստեղծմամբ ընձեռված հնարավորությունները.
- Մասնագիտական մարմիններին, ինչպիսին է Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ) անհրաժեշտ է

գործունեությունն ծավալել բուհական և կորպորատիվ հատվածում իրազեկման ուղղությամբ՝ հաշվապահության մասնագիտության շուկայական ճանաչումը բարելավելու, այդ մարմինների անդամների կազմն ընդլայնելու և ինքնաֆինանսավորման անցնելու նպատակով:

**Մասնագիտական և այլ մակարդակներում հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի կրթության և ուսուցման բարելավմանն ուղղված միջոցառումների հետ կապված՝ առաջարկվում է հետևյալը.**

- Ապահովել բուհերում աշխատանքների իրականացումը՝ մասնավոր հատվածի, կարգավորման մարմինների և մասնագիտական կազմակերպությունների հետ դրանց կապերի զարգացման ուղղությամբ.
- Իրականացնել «դասավանդողների վերապատրաստման» կայուն ծրագիր՝ դասավանդողների հմտությունների ու գիտելիքների արդիականացման համար.
- Ապահովել հայաստանյան բուհերում շարունակական ու ընդլայնվող ջանքերի գործադրումը՝ դասախոսական կազմը հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում համապատասխան պրակտիկ փորձ ունեցող դասախոսներով համալրելու նպատակով:

### **Ինչպես կարող են առաջարկները դառնալ բարեփոխումներ**

Ներկայացվող առաջարկներն ակնկալում են ամբողջական, բազմաճյուղ մոտեցման կիրառություն և սույն հաշվետվության հրապարակումից հետո հնարավորինս շուտափույթ իրականացում: Առաջարկների իրականացման համար կպահանջվի շահագրգիռ մի շարք կողմերի, այդ թվում՝ կառավարության, ոլորտը կարգավորողների և հաշվապահության մասնագիտության համագործակցությունը, որի առաջատարի դերում հանդես կգա կառավարության որևէ բարձրաստիճան ներկայացուցիչ:


Հայաստանը պետք է ստեղծի բազմաճյուղ Ազգային վերստուգիչ հանձնաժողով (ԱՎՀ), որը կղեկավարվի որևէ բարձրաստիճան պաշտոնյայի, լավագույն դեպքում՝ որևէ փոխնախարարի կողմից, հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում բարեփոխումների համակարգման նպատակով: ԱՎՀ-ն ոլորտային քաղաքականության պատասխանատուներին և կարգավորողներին խորհրդատվություն կտրամադրի ներկայացվող առաջարկների իրականացման վերաբերյալ: Այլ երկրների հաջող փորձի հիման վրա, սույն հաշվետվությամբ առաջարկվում է, որպեսզի ԱՎՀ-ն մշակի Երկրի ռազմավարություն և Երկրի գործողությունների մանրամասն պլան, որոնցով հստակ կսահմանվեն ձեռնարկվելիք հիմնական քայլերը, կբաշխվեն բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ պարտականությունները: Նշված պլանը պետք է ներառի բարեփոխումների

հաջող իրականացմանն անհրաժեշտ միջոցները թվարկող ու ըստ հողվածների ներկայացված բյուջե, և կառավարությունը, ոլորտային քաղաքականության պատասխանատուներն ու զարգացման գործընկերները պետք է համատեղ աշխատեն այդ միջոցներն ապահովելու ուղղությամբ՝ Հայաստանում ֆինանսական տեղեկատվության որակն ու հասանելիությունը բարելավելու ընդհանուր նպատակի իրագործման համար:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է 2007 թվականի հունիսին՝ Համաշխարհային բանկի փորձագետների խմբի կողմից Հայաստանում իրականացված դիագնոստիկ ուսումնասիրության արդյունքների հիման վրա: Հաշվետվությունն արտացոլում է 2008թ. հունիսի 27-ի դրությամբ առկա իրավիճակը. սակայն 2008թ. հունիսի 27-ի և դեկտեմբերի 31-ի միջև ընկած ժամանակահատվածի տեղ գտած որոշ զարգացումներ արտացոլվում են տողատակի ծանոթագրություններում: Ջոն Հուփերի ղեկավարությամբ գործող խմբի կազմում ընդգրկված են եղել Արման Վաթյանը, Գաբրիելա Կուցը (ECSPS), Գալինա Ալագարովան (ՄՖԿ) և Ջերալդ Քոզլերը (խորհրդատու): Անդրեյ Բուսույոչը օգնել է հաշվետվությունը վերջնական տեսքի բերելու աշխատանքին: Ուսումնասիրությունն իրականացվել է մասնակցային գործընթացի միջոցով՝ տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ և երկրի իշխանությունների առաջատար դերակատարությամբ:



# ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՌԻԴՏԻ ՍԿՊՅ. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



	Կանոնակարգման դաշտ	Հաշվապահություն	Աուդիտ	Մոնիտորինգ և կիրարկում	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	Կրթություն
<b>ԿԱՌՃԱ-ԺԱՄԿԵՏ</b>	<ol style="list-style-type: none"> <li>ՀՀՀՀՅՍ-երը փոխարինել ՀՀՅՍ-երի արդիական թարգմանությունը</li> <li>Ապահովել ՀՀՅՍ-երի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանություն կայուն գործընթաց</li> <li>Ապահովել ներկայումս ստեղծվող ընկերությունների ռեգիստրի իրավասությունների բավարար շրջանակ ու կարողությունների պատշաճ մակարդակ, իսկ իրենց հիմնական հաշվետվությունները հրապարակելու պահանջին ենթակա ընկերությունների մասով սահմանել որոշակի ժամկետ որանք ռեգիստրին ներկայացնելու համար</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>ՀՀՄԱ-ին անհրաժեշտ է գործունեություն ծավալել բուհերի - ուսանողների իրազեկման ուղղությամբ՝ կրթական ինստիտուտներում միանալ հաշվապահության մասնագիտությանը - անդամակցել ՀՀՄԱ-ին աշխատանքային հաշվառման ու աուդիտի բնագավառը,</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>ՀՀՄԱ-երը փոխարինել ԱՄՍ-երի արդիական թարգմանությունը - ապահովել ՄՍՍ-ի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանության կայուն գործընթաց</li> </ol>		<ol style="list-style-type: none"> <li>Ֆինանսների նախարարության անհրաժեշտ է սահմանել հստակ ու կոնկրետ չափանիշներ - նպատակներ, որոնց մասնագիտական կազմակերպությունը պետք է բավարարի՝ պետության կողմից չանվճարվող - որոշակի գործառույթներ ստանձնելու համար</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Պետական բուհերին անհրաժեշտ է շարունակել աշխատանքների իրականացումը՝ մասնավոր հատվածի, կարգավորման մարմինների - մասնագիտական կազմակերպությունների հետ իրենց կապերի զարգացման ուղղությամբ, - վերջիններիս հետ համագործակցության արդյունքներն օգտագործել հաշվապահական հաշվառման ու աուդիտի գծով կրթությունն ավելի շուկայատեղ դարձնելու համար</li> </ol>
<b>ՄԻՋՆԱ-ԺԱՄԿԵՏ</b>	<ol style="list-style-type: none"> <li>Մշակել - ներդնել ֆինանսական հաշվետվականության եռաստիճան համակարգ. .</li> <li>ՀՀՆԸ-երը պետք է լիարժեքորեն համապատասխանեն ՀՀՅՍ-երին</li> <li>ՓՄՁ-երը պետք է համապատասխանեն «ՓՄՁ-երի համար ՀՀՅՍ»-ին (երբ վերջինս առկա լինի)</li> <li>Միկրոձեռնարկություններ պետք է ապահովեն բացառապես հարկային նպասակներով ներկայացվող հաշվետվականություն</li> </ol>		<ol style="list-style-type: none"> <li>Վերանայել կանոնակարգման դաշտը՝ ֆինանսների նախարարության - այլ կառույցների (օրինակ՝ պրո-ֆեսիոնալ - աուդիտորների մասնագիտական ասոցիացիաների) միջ- աուդիտի բնագավառի կարգավորման պարտականությունների արդյունավետ թաշխուրմ կատարելու նպատակով</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Ֆինանսների նախարարությանը - հաշվապահական հաշվառման ու աուդիտի մասնագիտական ասոցիացիաներին անհրաժեշտ է շարունակել աուդիտի մասնագիտության որակի ար-տաքին ապահովման համակարգի հետագա զարգացումը</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>ՖՆ-ին անհրաժեշտ է հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի կարգավորման իր որոշակի գործառույթներ պատվիրակել մեկ կամ մի քանի մասնագիտական կազմակերպությունների, որոնք կբավարարեն իր կողմից սահմանված չափանիշներին. <ul style="list-style-type: none"> <li>Պատվիրակված գործառույթների թվում կարող է լինել հաշվապահների ու աուդիտորների որակավորումը - աուդիտի որակի հսկողությունը</li> </ul> </li> </ol>	
<b>ԵՐԿԱՐԱ-ԺԱՄԿԵՏ</b>				<ol style="list-style-type: none"> <li>Բարելավել ՖՆ-ի - կարգավորող այլ մարմինների կարողությունները ուսուցման, նոր աշխատակիցների ընդունման, գործուղումների ու փոխարինումների միջոցով</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Իրականացնել «ուսուցողների վերապատրաստման» կայուն ծրագիր՝ դասական դոկտրինայի հմտությունների ու գիտելիքների արդիականացման համար</li> <li>Հաշվապահական հաշվառման բնագավառին առնչվող առարկաների գծով բուհերի ուսումնական այլևսերը պետք է արդիականացվեն, իսկ դասախոսական կազմը պետք է համալրվի արակ-տիկ աշխատողներով ու կիրառական գիտելիքների տիրապետող դասախոս-ներով</li> </ol>	
					<ol style="list-style-type: none"> <li>Մասնագիտական միությունները պետք է բուհերի հետ համագործակցեն՝ մասնագիտական քննությունների ստորին աստիճաններից ազատման տարբերակները հնարավոր դարձնելու նպատակով</li> </ol>	

Հայաստան. Հաշվապահական հաշվառման ու աուդիտի ՍԿՊՅ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<i>Անգլերեն</i>	<i>Հայերեն</i>	<i>Մեկնաբանությունը</i>
AAAA	ՀՀԱԱ	Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա
ACCA	ԵՈՀԱ	Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա
ARMEX	ՀՖԲ	Հայաստանի ֆոնդային բորսա
ASRA	ՀՀՀՀՍ	Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ
BCBS	ԲՎԲԿ	Բանկային վերահսկողության բազելյան կոմիտե
CAP	ԵԳՊ	Երկրի գործողությունների պլան
CBA	ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
CPA	ԱՄՆ ՈՀՀ	Միացյալ Նահանգների որակավորված հանրային հաշվապահ
CPD	ՇՍԶ	Շարունակական մասնագիտական զարգացում
EU	ԵՄ	Եվրամիություն
GDI	ՀՆԵ	Համախառն ներքին եկամուտ
GNI	ՀԱԵ	Համախառն ազգային եկամուտ
FIG	ՖԱԽ	Ֆինանսա-արդյունաբերական խումբ
FDI	ՈՒՕԼ	Ուղղակի օտարերկրյա ներդրում
IAASB	ԱԵՄՍԽ	Աուդիտի և երաշխավորման միջազգային ստանդարտների խորհուրդ
IAESB	ՀՎՄՍԽ	Հաշվապահական կրթության միջազգային ստանդարտների խորհուրդ
IAIS	ԱՈՎՄԱ	Ապահովագրության ոլորտի վերահսկողների միջազգային ասոցիացիա
IAPS	ԱՄՊԴ	Աուդիտորական միջազգային պրակտիկայի դրույթներ
IAS	ՀՀՄՍ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ներառված են ՖՀՄՍ-երում)
IASB	ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
IASC	ՀՀՄՍԿ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտե
IASCF	ՀՀՄՍԿՀ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի հիմնադրամ
IES	ԿՄՍ	Կրթության միջազգային ստանդարտ
IESBA	ՀՎՄՍԽ	Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհուրդ
IFAC	ՀՄԴ	Հաշվապահների միջազգային դաշնություն
IFRS	ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ներառյալ ՀՀՄՍ-երը)
IMF	ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ISA	ԱՄՍ	Աուդիտի միջազգային ստանդարտներ
ISQC	ՈՎՄՍ	Որակի վերահսկողության միջազգային ստանդարտներ
JSC	ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
LLC	ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
MoF	ՖՆ	Ֆինանսների նախարարություն
NAS	ՀՀԱԱ	Հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտներ
NBFI	ՈԲՖՀ	Ոչ բանկային ֆինանսական հաստատություն
NSPF	ՈՊԿՀ	Ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամ
PIE	ՀՇՆԸ	Հանրային շահ ներկայացնող ընկերություն
ROSC	ՍԿՊՀ	Ստանդարտների և կանոնների պահպանման հաշվետվություն
SARA	ՀՀԱԱ	Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներ
SME	ՓՍԶ	Փոքր և միջին ձեռնարկություն
SMO	ԱՊԴ	ՀՄԴ-ի Անդամության պահանջների դրույթներ
SOE	ՊԶ	Պետական ձեռնարկություն

# Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանում հաշվապահական հաշվառման ու աուդիտի պրակտիկայի սույն գնահատումը Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) համատեղ նախաձեռնությունն է, որի արդյունքում կազմվում է Ստանդարտների և կանոնների պահպանման հաշվետվությունը (ՍԿՊՀ): Գնահատմամբ վեր են հանվում հաշվապահական հաշվառման ու աուդիտի միջավայրի այն ուժեղ ու թույլ կողմերը, որոնք ազդում են կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության որակի վրա, և ներկայացվում է ինչպես գործող պարտադիր պահանջների, այնպես էլ փաստացի պրակտիկայի ուսումնասիրությունը: Հաշվետվությամբ որպես համեմատման ուղեցիկ են կիրառվում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ)<sup>4</sup> և Աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ)<sup>5</sup>, զուգահեռներ են անցկացվում հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում միջազգային փորձի և լավագույն պրակտիկայի հետ:

2. Հայաստանը նախագահական կառավարմամբ, ներկայացուցչական ժողովրդավարության հանրապետություն է, որտեղ մեկ շնչի հաշվով<sup>6</sup> համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) կազմում է 1.930 ԱՄՆ դոլար: Շուրջ շուրջ 3 միլիոն ընդհանուր բնակչությամբ՝ Հայաստանը նախկին խորհրդային հանրապետությունների շարքում բնակչության խտությամբ գրավում է երկրորդ տեղը: Հայաստանցիների շուրջ 57 տոկոսն ապրում է քաղաքային շրջաններում, ընդ որում երկրի մայրաքաղաքը և ամենամեծ քաղաքը՝ Երևանը շուրջ 1 միլիոն բնակիչ ունի<sup>7</sup>:

3. Հայաստանի ՀՆԱ-ն ցուցաբերում է կայուն աճի տեմպեր՝ 2000-2006թթ. ժամանակահատվածում աճելով ավելի քան 100 տոկոսով<sup>8</sup>: 2006 թվականին աճի ցուցանիշները բարելավվել են՝ այդ թվում նաև

<sup>4</sup> ՖՀՄՍ-երը, որ ներառում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՍ), հրապարակվում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից. վերջինս հաշվապահական հաշվառման ստանդարտներ սահմանող, Լոնդոնում (Միացյալ Թագավորություն) գործող անկախ մարմին է: Պարզության համար մենք սույն հաշվետվությունում ՖՀՄՍ տերմինն օգտագործելիս նկատի ունենք ինչպես ՖՀՄՍ-երը, այնպես էլ ՀՀՄՍ-երը:

<sup>5</sup> ԱՄՍ-երը հրապարակվում են Աուդիտի և երաշխավորման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀԵՄՍԽ) կողմից:

<sup>6</sup> Ըստ Համաշխարհային բանկի՝ Ատլասի մեթոդով հաշվարկված Համաշխարհային զարգացման ցուցանիշների (2006թ.):

<sup>7</sup> Բնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային բանկի՝ 2005 թվականի դրությամբ Համաշխարհային զարգացման ցուցանիշներից (վերջին տվյալներ):

<sup>8</sup> Ըստ Համաշխարհային բանկի զարգացման ցուցանիշների, ՀՆԱ-ի (տարեկան տոկոսային) աճը 2000-2006թթ. ժամանակահատվածում ավելացել է 6-ից մինչև 13 տոկոս:

շինարարության ճյուղի զարգացման շնորհիվ: Սա մասամբ արդյունք էր հանքարդյունաբերության ու էներգետիկայի ոլորտներում նոր ներդրումների, իսկ մասամբ էլ՝ Երևանում բնակարանային ու գրասենյակային շենքերի շինարարության:

4. **Ներկայումս Հայաստանում գործում են 22 բանկային հաստատություններ, որոնց մեծ մասի սեփական կապիտալում օտարերկրյա ներդրումներ կան, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողների կողմից կատարված ներդրումներ:** Չնայած արտասահմանյան կապիտալի փոքր ծավալներին, Հայաստանի բանկային հատվածում մրցակցությունն աճում է՝ մի շարք օտարերկրյա բանկերի կողմից երկրում ներդրումների իրականացման մտադրությունների հետ կապված: Օտարերկրյա բանկերի մուտքի պարագայում համակարգը կարող է զարգանալ ավելի բազմաբնույթ բանկային ծառայությունների մատուցման ուղղությամբ:

5. **Հայաստանի ոչ բանկային հատվածը (ՈԲՀ) համեմատաբար թերզարգացած է:** Հիմնական դժվարությունը, որին բախվում են ոլորտի պրոֆեսիոնալ հաշվապահները, հաշվապահական և ֆինանսական հաշվետվողականության համակողմանի, ոլորտին հարմարեցված, գործնականում կիրառելի մեթոդաբանության բացակայությունն է<sup>9</sup>: ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ), որը պատասխանատու է ՈԲՀ-ի վերահսկողության համար, սահմանել է ֆինանսական հաստատությունների ղեկավարների ու գլխավոր հաշվապահների հավաստագրման պահանջ: Հավաստագրման գործընթացով սահմանվում են այդ անձանց կրթությանը, մասնագիտական փորձին և աշխատանքային կենսագրությանը վերաբերող չափանիշներ. ղեկավարների ու գլխավոր հաշվապահների ընտրության այսպիսի ուղղակի կարգավորումն ավելի հեռուն է գնում, քան մի շարք այլ երկրներում գործող կարգավորման համադրելի համակարգերը:

6. **Հայաստանի արժեթղթերի շուկան փոքր է:** Ներկայումս գործում է Հայաստանի ֆոնդային բորսայում (ՀՖԲ<sup>10</sup>) ցուցակված և կորպորատիվ արժեթղթեր թողարկող 14 ընկերություն: 2006 թվականի հունվարի 1-ից ԿԲ-ն ստանձնել է արժեթղթերի շուկայի վերահսկողության և կարգավորման գործառույթը (ի լրումն ապահովագրության և բանկային ոլորտների): 2007

<sup>9</sup> ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և ներդրումային ընկերությունների համար մշակվել են հաշվային պլանը և դրա մեկնաբանությունները, ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց կազմման կանոնները:

<sup>10</sup> 2009թ. հունվարի 26-ին ՀՖԲ-ն վերանվանվել է «ՆԱՍԴԱԲ Օեմեքս Արմենիա» ՓԲԸ-ի:

թվականի վերջին ՀՖԲ-ն և կենտրոնական դեպոզիտարիան ձեռք բերվեցին «ՕԵմէքս»<sup>11</sup> ընկերության կողմից:

7. Գործարար միջավայրի բարելավման նպատակով հետագա բարեփոխումների, ազատականացման ու ապակարգավորման ուղղությամբ ընթանալու ճանապարհին Հայաստանին անհրաժեշտ է բարելավել ֆինանսական թափանցիկությունը և հաշվապահական հաշվառման ու աուդիտի պրակտիկան՝ բարեփոխումների այս ընթացքին օժանդակելու համար: Ինչպես ուղղակի օտարերկրյա ներդրումների (ՈՒՕՆ), այնպես էլ ներքին ներդրումների աճող մակարդակը պահանջում է միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրորակ ֆինանսական տեղեկատվության առկայություն: Ֆինանսական հաշվետվողականության, հաշվապահական հաշվառման ու աուդիտի, ինչպես նաև դրանց կառավարման կանոնակարգող դաշտի հետագա զարգացումն ու ամրապնդումը բարենպաստ արդյունքներ կունենան Հայաստանի ու նրա քաղաքացիների համար: Այս համատեքստում, սույն հաշվետվությամբ ներկայացվում են ոլորտային քաղաքականությանն առնչվող առաջարկներ՝ կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության որակի բարելավման և ֆինանսական հաշվետվողականության այնպիսի հենքի ձևավորման նպատակով, որը նպաստավոր կլինի մասնավոր ու ֆինանսական հատվածների կայուն աճի համար՝ այդպիսով ավելի հասանելի դարձնելով գլոբալ ֆինանսական շուկաները և շուկայական տնտեսության այլ գործիքները:

## II. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԵՆՔԸ<sup>12</sup>

### Ա. Կանոնակարգման դաշտը

#### *Ա.1. Հաշվապահական հաշվառման ու ֆինանսական հաշվետվողականության կանոնակարգման դաշտը*

8. Հայաստանում ձեռնարկությունների հաշվետվողականության պահանջները կարգավորվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 1998 թվականին և վերջին անգամ լրամշակվել է 2003-ին: Հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացվում է

<sup>11</sup> «ՕԵմէքս»-ը արժույթի փոխարկման ոլորտում գործող ընկերություն է: «ՕԵմէքս»-ն ունի արժույթային բորսաներ սկանդինավյան և բալթյան երկրներում, մշակում և տրամադրում է տեխնոլոգիաներ ու ծառայություններ արժեթղթերի ոլորտում գործող ընկերություններին:

<sup>12</sup> Սույն հաշվետվությամբ համառոտ և ոչ ավելի, քան ընդհանուր պատկերացում տալու չափով, ներկայացված են հաշվապահական հաշվառման, աուդիտի և ֆինանսական հաշվետվողականության ոլորտներում գործող իրավական սկզբունքները: Հաշվետվությունը չի հավակնում տալ օրենքի սպառիչ նկարագրությունը կամ դրա դրույթների իրավական մեկնաբանությունը:

Ֆինանսների նախարարության կողմից: ՖՆ-ը հաստատում է հաշվապահական հաշվառման ստանդարտները, մշակում է առաջարկվող հաշվային պլանը, տալիս է հրահանգներ ստանդարտների ու հաշվային պլանի կիրառության վերաբերյալ և հրապարակում է հաշվապահական հաշվառման ոլորտը կանոնակարգող այլ ակտեր: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը կարող է հաստատել նաև ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր և դրանց լրացման ցուցումներ՝ հիմք ընդունելով ՖՀՄՍ-երը և Միջազգային ֆինանսական հաշվետվողականության մեկնաբանությունների կոմիտեի մեկնաբանությունները:<sup>13</sup> 1999 թվականին ՖՆ-ը, ԱՄՆ ՄՁԳ-ի օժանդակությամբ, մշակել է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՄ)՝ հիմնվելով այդ ժամանակ գործող ՀՀՄՍ-երի վրա: ՀՀՀՀՄ-երը վերջին անգամ ամբողջությամբ վերանայվել են 2001 թվականին: Արդյունքում, ՀՀՀՀՄ-երի ներկայիս տարբերակն իրենից ներկայացնում է 2001 թվականի դրությամբ գործող ՖՀՄՍ/ՀՀՄՍ-երի ոչ էականորեն փոփոխված տարբերակը (ՀՀՀՀՄ-երի մշակման ու ներկայիս վիճակի վերաբերյալ մանրամասների համար տես՝ բաժին II.Դ «Հաշվապահական հաշվառման ստանդարտների սահմանումը»): «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը ՀՀ կենտրոնական բանկին՝ որպես կարգավորող մարմնի, իրավասություն է տալիս իր կողմից վերահսկվող սուբյեկտների համար սահմանել հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության պահանջները<sup>14</sup>:

9. 2001 թվականին ՖՆ-ը, ի լրումն ՀՀՀՀՄ-երի, հրապարակել է հաշվային պլանը՝ դրա կիրառության հրահանգների հետ մեկտեղ: Հաշվային պլանում պարտադիր կիրառության ենթակա են միայն որոշ կողեր, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների խոշոր բաղկացուցիչներին. դրանց թվում են, օրինակ, ոչ ընթացիկ ակտիվների, ընթացիկ ակտիվների, բաժնետիրական կապիտալի, պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի կողերը: Բացի այդ, ՀՀՀՀՄ-երում օգտագործված որոշ հասկացություններ ու դրանց կիրառության ընթացակարգը մանրամասնված են 2001 թվականին ՖՆ-ի կողմից հաշվապահների համար հրապարակված մեթոդաբանական ուղեցույցում: Ուղեցույցը մեկնաբանում է

<sup>13</sup> Ընդհանրապես ՖՀՄՍ-երի տեղական մեկնաբանությունները ՀՀՄՍ-ի խորհրդի կողմից չեն խրախուսվում և, հետևաբար, եթե ՖՆ-ը հրապարակում է ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևեր, դրանք պետք է միայն առաջարկության բնույթ կրեն:

<sup>14</sup> 2005 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միասնական համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքով ֆինանսական համակարգի մասնակիցների (այսինքն՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների, ներդրումային և ապահովագրական ընկերությունների) գործունեության կարգավորման ու վերահսկողության գործառնությամբ 2006 թվականի հունվարի 1-ից փոխանցվել է ԿԲ-ին:

ստանդարտները և ներկայացնում պրակտիկ օրինակներ ու առաջարկներ հաշվապահական տիպիկ գործառնությունների վերաբերյալ:

10. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են ֆինանսական հաշվետվողականության գծով ձեռնարկությունների պարտականությունները: Օրենքը սահմանում է ՖՀՄՍ-երի վրա հիմնված հաշվապահական հաշվառման հիմնարար սկզբունքներն ու պահանջները, ինչպիսիք են հետևողականությունը, հաշվեգրման սկզբունքը, ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության հասկանալի լինելու պահանջը, ձևի նկատմամբ բովանդակության գերակայությունը, հաշվենկատությունը, ամբողջականությունը և այլն: Օրենքը նաև սահմանում է ձեռնարկությունների կողմից հաշվապահական հաշվառում վարելու կարգը, այդ գործընթացի կազմակերպման ու փաստաթղթավորման պահանջները: Այնուհետև, օրենքով սահմանվում է, որ.

- Ձեռնարկությունները պետք է պատրաստեն ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, դրամական հոսքերի մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, այդ թվում բացահայտեն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ինչպես նաև կատարեն ՀՀՀՀՍ-երով պահանջվող այլ բացահայտումներ.
- Աուդիտի ենթակա ընկերությունները պետք է ներկայացնեն իրենց ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտի եզրակացությունը.
- Ձեռնարկության գլխավոր տնօրենը միանձնյա պատասխանատու է հաշվապահական հաշվառման գործառնության կազմակերպման համար, սակայն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության խախտումների համար գլխավոր տնօրենը և հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման համար պատասխանատու անձը (որպես կանոն՝ գլխավոր հաշվապահը) կրում են համատեղ պատասխանատվություն.
- Ընկերությունները տարեկան ֆինանսական հաշվետվություններ են ներկայացնում բաժնետերերին (փայատերերին), իրենց նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմիններին (ներկայումս այդպիսի մարմինը մեկն է՝ ԿԲ-ն) և վիճակագրական ծառայությանը: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ի կողմից վերահսկվող ընկերությունները, այդ թվում հաշվետու թողարկողները

(այսուհետ՝ նաև ցուցակված ընկերություններ)<sup>15</sup> Կենտրոնական բանկ են ներկայացնում եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ:

11. Վերջերս ՖՆ-ը մշակել է հաշվապահական հաշվառման մասին օրենքում փոփոխությունների կատարման նախագիծ, որը ներկայացվել է Ազգային ժողովին և որով նախատեսվում է. ա) ՀՀՀՅՍ-երը փոխարինել հայերեն թարգմանված ՖՀՄՍ-երով՝ ապահովելով թարգմանության գործընթացի շարունակական բնույթը և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հիմնադրամի (ՀՀՄՍԽՀ) պահանջներին համապատասխանությունը, բ) ընդունել ՖՀՄՍ-երի վրա հիմնված հաշվային նոր պլան: Օրենքի նախագծի համաձայն, ՖՀՄՍ-երի կիրառությունը պարտադիր կդառնա խոշոր ընկերությունների համար<sup>16</sup>, իսկ ՓՄՁ-երի համար հաշվապահական հաշվառման ստանդարտները կմշակվեն ՀՀՄՍԽ-ի կողմից «մասնավոր ընկերությունների համար ՖՀՄՍ»-ի հիման վրա՝ դրա հրապարակումից հետո: Մինչև ավելի մեղմ ստանդարտների մշակումը, ՓՄՁ-երն ամենայն հավանականությամբ ՖՀՄՍ-երի կիրառության հետ կապված դժվարություններ կունենան: Ավելին, Հայաստանում ՓՄՁ-երը դժվարություններ կունենան նաև «մասնավոր ընկերությունների համար ՖՀՄՍ»-ի պատշաճ կիրառության հարցում՝ համապատասխան կարողությունների, հմտությունների և ուսուցման բացերի պատճառով: Վերոնշյալ օրենքի նախագծի համաձայն՝ 2009թ. հունվարի 1-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը կկազմեն և կներկայացնեն ՖՀՄՍ-ներին և Միջազգային ֆինանսական հաշվետվողականության մեկնաբանությունների կոմիտեի՝ IFRIC-ի, մեկնաբանություններին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ: Վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային ընկերությունները, ցուցակված ընկերությունները, ներդրումային ընկերությունները, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները,

<sup>15</sup> «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում չկա «ցուցակված ընկերության» սահմանումը: Սակայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ «հաշվետու թողարկող» է համարվում է այն թողարկողը, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթուղթը թույլատրված է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին. հետևաբար «ցուցակված ընկերություններ» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համատեքստում վերաբերում է «հաշվետու թողարկողներին»:

<sup>16</sup> 2008թ. դեկտեմբերին ընդունված՝ «Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, խոշոր է համարվում այն կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից որևէ մեկը. ա) նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը. (շուրջ 1.35 միլիոն ԱՄՆ դոլարը) կամ բ) նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը (շուրջ 1.35 միլիոն ԱՄՆ դոլար):



վերապահովագրական ընկերությունները և ապահովագրական բրոքերները պետք է ՖՅՄՍ-երի և IFRIC-ի մեկնաբանությունների համաձայն ֆինանսական հաշվետվություններ կազմեն և ներկայացնեն՝ սկսած 2010թ. հունվարի 1-ից: Միաժամանակ, բացի վերոնշյալ կազմակերպություններից, ոչ ֆինանսական հատվածի խոշոր ընկերություններից պահանջվելու է նման հաշվետվություններ ներկայացնել՝ սկսած Հայաստանի Հանրապետության կողմից ՖՅՄՍ-երի և IFRIC-ի մեկնաբանությունների պաշտոնապես ընդունումից հետո վեց-ամսյա ժամկետին հաջորդող տարվա հունվարի 1-ից: Նշվածից բացի, օրենքի մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ հաշվապահական հաշվառումը կարգավորող մարմինը կարող է բացի ՖՅՄՍ-երից հաշվապահական հաշվառման այլ ստանդարտներ սահմանել, որոնք կկիրառվեն Կառավարության կողմից սահմանված՝ որոշ հարկ վճարողների համար:

12. Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով առաջարկվում է ստեղծել Հաշվապահների և աուդիտորների պալատ, որը կիրականացնի հաշվապահական հաշվառման ոլորտի կարգավորումը: Օրենքի նախագծով նախատեսվում է, որ պալատը պետք է իրականացնի ՖՅՄՍ-երի թարգմանությունը և հաստատի ՓՄՁ-երի վերաբերյալ ստանդարտները, հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրական ակտեր, ստանդարտ հաշվային պլանը, հրապարակի հաշվային պլանի և ֆինանսական հաշվետվությունների ստանդարտ կազմի կիրառության վերաբերյալ ուղեցույցներ: Թեպետ հաշվապահական հաշվառման ոլորտի կանոնակարգման գործառույթն այսպիսի մարմնի փոխանցելը դրական զարգացում է, այդ մարմնի կազմը և պալատի ստեղծման ռազմավարությունը դեռևս կոնկրետ որոշված չեն: Նախատեսվող պալատը կարող է նաև իրականացնել աուդիտի ոլորտի նկատմամբ վերահսկողության գործառույթը, եթե ֆինանսների նախարարությունն իր լիազորությունների որոշ մասը պատվիրակի մասնագիտական կազմակերպություններին:

13. Ստորև ամփոփ ներկայացվում են կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության պահանջները.

**Աղյուսակ 1. Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության պահանջները**

Ֆինանսական հաշվետվություններ	Իրավաբանական անձի ֆինանսական հաշվետվություններ	Աուդիտի պահանջներ
Կազմակերպություններ		
ՀՖԲ-ում գործառքներ կատարելու իրավունք ունեցող ընկերություններ (ցուցակված ընկերություններ)	Ներկայումս պարտավոր են կիրառել ՀՀՀՄՍ-երը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով պետք է հաշվետվություններ ներկայացնեն ՖՅՄՍ-երի համաձայն:	Պահանջվում է տարեկան աուդիտ

<b>Բաց բաժնետիրական ընկերություններ</b>	Ներկայումս պարտավոր են կիրառել ՀՀՀՅ-երը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով պետք է հաշվետվություններ ներկայացնեն ՖՀՄՍ-երի համաձայն, եթե ճանաչվում են որպես խոշոր ընկերություն:	Աուդիտ չի պահանջվում
<b>Փակ բաժնետիրական ընկերություններ</b>	Ներկայումս պարտավոր են կիրառել ՀՀՀՅ-երը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով պետք է հաշվետվություններ ներկայացնեն ՖՀՄՍ-երի համաձայն, եթե ճանաչվում են որպես խոշոր ընկերություն:	Աուդիտ չի պահանջվում
<b>Մասնավոր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ</b>	Ներկայումս պարտավոր են կիրառել ՀՀՀՅ-երը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով պետք է հաշվետվություններ ներկայացնեն ՖՀՄՍ-երի համաձայն, եթե ճանաչվում են որպես խոշոր ընկերություն:	Աուդիտ չի պահանջվում
<b>Բանկեր</b>	Հաշվապահական հաշվառումը և հաշվետվողականությունը կատարվում է ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների և կանոնակարգերի համաձայն, որոնք սկզբունքորեն պետք է մշակված լինեն գործող միջազգային ստանդարտների հիման վրա, սակայն գործնականում որոշ էական առումներով տարբերվում են ՖՀՄՍ-երից (տես՝ բաժին III)	Պահանջվում է տարեկան աուդիտ
<b>Ապահովագրական ընկերություններ</b>	Ներկայումս պարտավոր են կիրառել ՀՀՀՅ-երը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով պետք է հաշվետվություններ ներկայացնեն ՖՀՄՍ-երի համաձայն:	Պահանջվում է տարեկան աուդիտ

14. **Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս** Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձինք՝ անկախ չափից, ներկայումս պարտավոր են առաջնորդվել ՀՀՀՅ-երով: Փոքր և միջին ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման պարզեցված պահանջներ նախատեսված չեն: Ընդամին, ՀՀՀՅ-երի դրույթները ՓՄՁ-երի մեծամասնության կողմից հետևողականորեն ու պատշաճ կերպով չեն կիրառվում, ինչի պատճառը ՀՀՀՅ-երի բարդությունը և ՓՄՁ-երի կարիքներին հարմարեցված չլինելն է, ինչպես նաև ՓՄՁ-երում այդ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման փորձառու մասնագետների բացակայությունը: Հայաստանյան օրենսդրության համաձայն, բոլոր ընկերությունները ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց բաժնետերերին, իսկ որոշ ֆինանսական ցուցանիշներ նաև՝ վիճակագրական ծառայությանը: Բացի այդ, բաց բաժնետիրական ընկերությունները պետք է զանգվածային լրատվության միջոցներում ամփոփ տեսքով հրապարակեն իրենց ֆինանսական հաշվետվությունները: ՓՄՁ-երի մեծ մասը գործում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակով և հաշվետու չեն որևէ

կարգավորող մարմնի, որը կվերահսկեր նրանց ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը ՀՀՀՀՄ-երին: Արդյունքում, բազմաթիվ ՓՄՁ-եր պատրաստում են միայն հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվություններ: Գործնականում խիստ փոքրաթիվ ՓՄՁ-եր են պատրաստում ՀՀՀՀՄ-երի վրա հիմնված ֆինանսական հաշվետվություններ, և դա հիմնականում այն դեպքերն են, երբ նրանց ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ է արտաքին ֆինանսավորում ներգրավել: Թեև բանկերը, որ ՓՄՁ-երի համար ֆինանսավորման հիմնական աղբյուրներից են, հաճախ այդ ընկերությունների ներկայացրած ֆինանսական տեղեկատվության վրա չեն հիմնվում և ինքնուրույն իրականացնում են պոտենցիալ վարկառուների գործունեության ֆինանսական լրացուցիչ վերլուծություն, դիտարկված ներկա միտումները ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունների կիրառումը որոշ չափով ավելացել է<sup>17</sup>:

15. **Բանկերում հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության գործառնությունը կարգավորվում է ԿԲ-ի կողմից: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկերը պետք է հաշվապահական հաշվառում վարեն ԿԲ-ի և լիազորված պետական մարմնի (ՖՆ) կողմից համատեղ համաձայնեցված ընթացակարգերով:** Նույն օրենքով նախատեսվում է, որ ԿԲ-ն պետք է հաշվի առնի գործող միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ) և մշակի հրապարակվող ու ԿԲ-ին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը: ԿԲ-ն բանկերի համար մշակել է ֆինանսական հաշվետվությունների ու այլ բացահայտումների ստանդարտ ձևեր և սահմանել հիմնական բանկային գործառնությունների հաշվապահական հաշվառման կանոնները: Այդուհանդերձ, այդ կանոններն ու ձևերը լիարժեքորեն չեն համապատասխանում ՖՀՄՍ-երի պահանջներին (մասնավորապես՝ ճանաչման ու չափման սկզբունքներին և այլն):

16. **«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով պահանջվում է, որ բոլոր առևտրային բանկերը ենթարկվեն տարեկան արտաքին աուդիտորական ստուգման:** Բաժնետերերի ընդհանուր ժողովը արտաքին աուդիտորին նշանակում է ԿԲ-ի կողմից սահմանված ընտրության չափանիշների հիման վրա: Ներկայումս ԿԲ-ի պահանջները բավարարում են Հայաստանում գործող միայն երկու միջազգային աուդիտորական ընկերություն: Վերջերս ԿԲ-ն սահմանել է տարվա ընթացքում իրեն

<sup>17</sup> Ավելացումը բացատրվում է այն հանգամանքով, որ բանկերի մի շարք ինդեքսներ (գնահատման համակարգեր), որոնք հաշվարկվում են վարկառուների ֆինանսական հաշվետվություններում բացահայտվող տվյալների հիման վրա, վարկային որոշումների կայացման համար կիրառվում են որպես օբյեկտիվ չափանիշներ:

ներկայացվող պրուդենցիալ հաշվետվությունների արտաքին աուդիտի վերաբերյալ պահանջ: Այդուհանդերձ, աուդիտորական երաշխավորության պահանջվող նակարդակը, ինչպես նաև դրան առնչվող աշխատանքի շրջանակները դեռևս հստակ սահմանման կարիք ունեն:

17. Բանկերը պարտավոր են տարեկան առնվազն մեկ անգամ ԿԲ ներկայացնել այն իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, որոնք նշանակալից մասնակցություն ունեն բանկի կանոնադրական հիմնադրամում. նույն պահանջը վերաբերում է նաև նշված իրավաբանական անձանց հետ փոխկապակցված անձանց: Բանկերը տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում հրապարակում են իրենց աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, իսկ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 15 օրվա ընթացքում՝ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Բանկերի մեծամասնությունն իրենց ինտերնետային կայքէջում հրապարակում է եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

18. ԿԲ-ն վերահսկում է նաև ոչ բանկ ֆինանսական հաստատություններին (ՈԲՖՀ), այդ թվում՝ վարկային կազմակերպություններին, ապահովագրական և ներդրումային ընկերություններին: ԿԲ-ի կողմից սահմանված կարգի համաձայն, ՈԲՖՀ-երը ներկայացնում են ՀՀՀՀՍ-երի հիման վրա կազմված և աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Բացի այդ, ՈԲՖՀ-երը պարտավոր են ԿԲ ներկայացնել կարգավորման նպատակով տրամադրվող հաշվետվություններ, որոնցում ըստ ապահովագրության տեսակների ներառված է տեղեկատվություն ապահովագրավճարների և ներկայացված պահանջների, ակտիվների իրացվելիության, հաշվեկշռի վճարունակության, վերաապահովագրության վճարների ու մի շարք այլ հարցերի վերաբերյալ, որոնք վերլուծվում են ավելի մանրամասնորեն, քան ՀՀՀՀՍ-երի համաձայն կազմված ֆինանսական հաշվետվություններով ներկայացված տվյալները: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՈԲՖՀ-երի աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է հրապարակվեն որոշակի նվազագույն տպաքանակով լրագրում:

19. Բաժնետիրական ընկերություններում գլխավոր տնօրենը պատասխանատու է հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության գործառույթի կազմակերպման համար: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է, որ գլխավոր տնօրենը պատասխանատու է ընկերության բաժնետերերին և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվող հաշվապահական ու այլ

տեղեկատվության (այդ թվում՝ ֆինանսական տեղեկատվության) արժանահավատության համար: Գլխավոր տնօրենը պատասխանատու է նաև ֆինանսական, վիճակագրական և համապատասխան օրենքներով պահանջվող այլ հաշվետվությունների ժամանակին ներկայացման համար: «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ որևէ կոնկրետ պահանջ չի նախատեսում, թեպետ ՀՀՀՅՍ-երը (ՖՀՄՍ-երի հիման վրա) պահանջում են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ և այդ պահանջը ներառված է «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետում. «օրենքով և ստանդարտներով նախատեսված դեպքերում մայր կազմակերպությունը պարտավոր է կազմել համախմբված ֆինանսական հաշվետվություններ»:

20. Բոլոր բաժնետիրական ընկերություններն օրենքով պարտավոր են<sup>18</sup> ունենալ Վերստուգիչ հանձնաժողով կամ վերստուգիչ, այսինքն՝ ներքին մարմին, որը պատասխանատու է ընկերության տարեկան ֆինանսական գործունեության արդյունքների ուսումնասիրության համար: Վերստուգիչ հանձնաժողովը/ վերստուգիչը հաշվետու է բաժնետերերի ընդհանուր ժողովին և կարող է կազմված լինել անձանցից, ովքեր ընկերության կառավարման մարմնի անդամ չեն հանդիսանում: Օրենքը չի սահմանում Վերստուգիչ հանձնաժողովին/ վերստուգիչին ներկայացվող որակական պահանջներ, թեպետ իդեալական դեպքում նրանք պետք է լինեն ֆինանսական և/կամ աուդիտի ոլորտում որոշակի աշխատանքային փորձ ունեցող անձինք: Գործող օրենսդրության համաձայն, Վերստուգիչ հանձնաժողովի գործառույթն ինչ-որ առումով իրենից ներկայացնում է ներքին աուդիտի և Աուդիտի հանձնաժողովի գործառույթների որոշակի կոմբինացիա, թեպետ Վերստուգիչ հանձնաժողովն իրավասու չէ իրականացնել վերջին երկուսի մի շարք գործառույթներ, ինչպիսիք են ներքին հսկողության համակարգերի գնահատումը, աուդիտորի նշանակման հաստատումը, աուդիտորի գործունեության և անկախության ուսումնասիրությունը, արտաքին աուդիտի առաջարկներին ղեկավարության պատշաճ արձագանքի ապահովումը և այլն: Վերստուգիչ հանձնաժողովի միջոցով բաժնետերերի կողմից իրականացվող մոնիտորինգի բացակայության պատճառով, բազմաթիվ բաժնետիրական ընկերություններում մնան հանձնաժողով կամ ստեղծված չէ, կամ զուտ անվանական դեր է կատարում: ԿԲ-ի կողմից կարգավորվող կազմակերպություններում Վերստուգիչ հանձնաժողովի կամ վերստուգիչի գործառույթն իրականացվում է ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից, որոնք հսկողություն են իրականացնում կազմակերպության ամենօրյա գործունեության և ռիսկերի,

<sup>18</sup> «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը տարածվում է ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող ընկերությունների նկատմամբ, եթե այն չի հակասում ընկերությունների գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքներին:

գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի և ստորաբաժանումների ղեկավարների նկատմամբ: Օրենքն անհրաժեշտ է լրամշակել՝ ցուցակված ընկերություններում Վերստուգիչ հանձնաժողովը փոխարինելով Աուդիտի հանձնաժողովով և վերջինիս դերը սահմանելով ըստ միջազգային լավագույն փորձի: Նման Աուդիտի հանձնաժողով ունենալու պահանջ պետք է սահմանվի առնվազն բոլոր բանկերի, ապահովագրական ընկերությունների, ՀՖԲ-ում գործարքներ կատարելու իրավունք ունեցող կազմակերպությունների և հանրային շահ ներկայացնող այլ ընկերությունների (ՀՇՆԸ) համար: Այս հարցն ավելի հանգամանորեն ներկայացված է 2005 թվականի Կորպորատիվ կառավարման ոլորտի ՍԿՊՀ-ում:

**21. Ընդհանուր առմամբ, ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները անմիջականորեն հասանելի չեն հանրության համար:** «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը բաժնետիրական ընկերություններին պարտադրում է զանգվածային լրատվության միջոցներում հրապարակել միայն աուդիտի ենթարկված տարեկան հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը<sup>19</sup>: Դրամական հոսքերի մասին հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների հրապարակման պահանջ, սակայն, սահմանված չէ: Ֆինանսական հաշվետվություններից սահմանափակ քանակով քաղվածքների հրապարակումը թերթերում անարդյունավետ է՝ արտաքին օգտագործողի համար հաճախ նվազ օգտակարություն ունեցող այդ ֆինանսական հաշվետվությունների ոչ ամբողջական բնույթի պատճառով<sup>20</sup>: Անհրաժեշտ է ստեղծել պետական ռեգիստր, որտեղ ֆինանսական հաշվետվությունները հասանելի կլինեն հանրության համար (ինչը պահանջվում է ԵՄ անդամ երկրներում), իսկ կարգավորվող կազմակերպություններն ու ՀՇՆԸ-երը պետք է իրենց ամբողջական ֆինանսական հաշվետվությունները տեղադրեն իրենց սեփական և համապատասխան կարգավորող մարմնի ինտերնետային կայքէջերում:

**22. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը պահանջում է, որ բոլոր ընկերությունները, որոնց արժեթղթերը թույլատրվում են ՀՖԲ-ում առևտրի համար ԿԲ ներկայացնեն ՀՀՀՄ-երի հիման վրա կազմված եռամսյակային և աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական**

<sup>19</sup> Ըստ ընդհանուր պահանջի, ֆինանսական հաշվետվությունները պետք է հրապարակվեն առնվազն 1.000 օրինակ տպաքանակով թերթում:

<sup>20</sup> ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող ֆինանսական հաստատություններից պահանջվում է իրենց աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը, ինչպես նաև միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, հրապարակել իրենց կայքէջերում:

**հաշվետվություններ:** Այդ ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները պետք է ներկայացվեն նաև Հայաստանի ֆոնդային բորսային: ԿԲ-ն այդ ֆինանսական հաշվետվությունները հասանելի է դարձնում հանրության համար՝ դրանք տեղադրելով իր ինտերնետային կայքէջում: Այդուհանդերձ, ԿԲ-ի կողմից կարգավորվող բազմաթիվ ընկերություններ ներկայացնում են ՀՀՀՀՍ-երին համապատասխանող ձևաչափով կազմված հարկային հաշվետվություններ:

## ***Ա.2. Աուդիտի կանոնակարգման դաշտը***

23. Պարտադիր աուդիտի պահանջը ըստ ընկերությունների տեսակների մանրամասն ներկայացված է աղյուսակ 1-ում. այսպես, բոլոր բաց բաժնետիրական ընկերությունները (այդ թվում՝ բոլոր ցուցակված ընկերությունները) պարտավոր են ունենալ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Պարտադիր աուդիտի այս պահանջը տարբեր է ԵՄ-ի աուդիտի պահանջից, որով անդամ երկրներին թույլատրվում է փոքր ընկերություններին ազատել աուդիտից: ԵՄ-ը սահմանում է «փոքր» ընկերությունների մեծության առավելագույն սահմանաչափեր, սակայն անդամ պետությունները կարող են նվազեցնել այդ սահմանաչափերը (այսինքն՝ աուդիտի պահանջից ազատել ավելի փոքրաթիվ ընկերությունների): Հաշվի առնելով ներկայումս Հայաստանում աուդիտի մասնագիտության սահմանափակ կարողությունները, պարտադիր աուդիտի պահանջը պետք է սահմանափակել այն ընկերություններով, որոնց աուդիտի անցկացումը պայմանավորված է հանրային շահով:

24. Աուդիտի անցկացմանը և աուդիտորներին ներկայացվող պահանջները սահմանված են «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքը աուդիտորներից պահանջում է լիցենզավորվել և կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված աուդիտի ստանդարտները՝ հիմնվելով Աուդիտի միջազգային ստանդարտների և ՀՄԴ-ի Վարքագծի կանոնագրքի վրա: Օրենքով սահմանվում է նաև, որ աուդիտորական ընկերությունները աուդիտորական ծառայություններից բացի չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական որևէ այլ գործունեությամբ՝ բացառությամբ հաշվապահական հաշվառմանն առնչվող որոշակի գործունեության, ինչպիսին է ֆինանսական հաշվետվությունների կազմումը, հարկային և իրավական հարցերով խորհրդատվությունը և այլն: Մինևույն ժամանակ, օրենքն արգելում է աուդիտորական ծառայությունների մատուցումն այն դեպքում, երբ տվյալ ընկերությանը մատուցվել են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման կամ գնահատման ծառայություններ: Օրենքով սահմանվում է նաև աուդիտորների անկախության

պահանջը. նրանց արգելվում է աուդիտորական ծառայություններ մատուցել այն կազմակերպություններին, որոնց հետ գտնվում են «մերձավոր» կապերի մեջ:

25. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով աուդիտորական եզրակացությունը սահմանվում է որպես աուդիտի ստանդարտներին համապատասխան կերպով կազմված փաստաթուղթ, որի հրապարակման անհրաժեշտությունը որոշում է աուդիտի ենթարկվող անձը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Այդուհանդերձ, օրենքը չի անդրադառնում մի շարք կարևոր հարցերի: Օրենքն աուդիտորների նշանակման և ազատման հատուկ ընթացակարգեր կամ պահանջներ, ինչպես նաև բաժնետերերին հաշվետվողականության որևէ պահանջ չի սահմանում: Աուդիտորների պատասխանատվությունը նույնպես հստակ սահմանված չէ, սակայն նախատեսված է, որ աուդիտորի լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել «կեղծ աուդիտորական եզրակացություն» տրամադրելու փաստի հայտնի դառնալու դեպքում: Աուդիտորներից չի պահանջվում ներկայացնել իրենց աուդիտորական աշխատանքի արդյունքների հետ կապված հայցապահանջների դեմ ապահովագրության երաշխիք:

26. Իրավաբանական անձանց աուդիտորները «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է ունենան Ֆինանսների նախարարության կողմից տրված լիցենզիա: Աուդիտի լիցենզիա կարող են ստանալ անհատները կամ առնվազն երկու աուդիտոր ունեցող ընկերությունները, որոնց կանոնադրական կապիտալի առնվազն 50 տոկոսը պատկանում է աուդիտորներին: Լիցենզիա ձեռք բերելու համար աուդիտորը պետք է անցնի աուդիտորների որակավորման քննություն, որը ներկայումս անցկացվում է «լիազորված մարմնի», այսինքն՝ ՖՆ-ի կողմից: Այդուհանդերձ, օրենքը նախատեսում է «մասնագիտացված կառույցի» առկայությունը, որը կարող է «լիազորված մարմնի» և «աուդիտորների որակավորման հանձնաժողովի»<sup>21</sup> հաստատմամբ անցկացնել աուդիտորների որակավորման հավաստագրումներ: Այս որակավորման վերաբերյալ ավելի մանրամասն քննարկման համար տես՝ բաժին II.Բ-ն և II.Գ-ն:

<sup>21</sup> 2008թ. օգոստոսին ընդունված կառավարության որոշման համաձայն՝ Հաշվապահների միջազգային դաշնության կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում որակավորված հաշվապահներն ու աուդիտորները որակավորման նպատակով համարվում են քննությունը հանձնած: 2008թ. նոյեմբերին ՀՀԱԱ-ն հավատարմագրվել է հաշվապահների և աուդիտորների որակավորման նպատակով, իսկ որակավորման կարգը պետք է համաձայնեցվի ՖՆ-ի հետ:



## Բ. Հաշվապահության և աուդիտի մասնագիտությունները

### Բ.1. Հաշվապահության մասնագիտությունը

27. Հայաստանում պրոֆեսիոնալ հաշվապահների ընդհանուր թիվը ճշգրիտ որոշելը դյուրին չէ, քանի որ մասնագիտությունը դեռևս համեմատաբար ոչ պաշտոնական բնույթ է կրում, և պրոֆեսիոնալ հաշվապահների մեծ մասը որևէ մասնագիտական կազմակերպության չեն անդամակցում: ՖՆ-ի գնահատականներով, շուրջ 153 մարդ ունի ՖՆ-ից ստացած հաշվապահի վկայական<sup>22</sup>, իսկ հիմնական մասնագիտական կազմակերպությանն անդամակցում է շուրջ 700 մարդ:

28. ՖՆ-ի հաշվապահի վկայական ունեցողները հիմնականում ընկերությունների «գլխավոր հաշվապահի» պաշտոն են զբաղեցնում<sup>23</sup>: Հայաստանյան օրենսդրության պահանջների համաձայն, ընկերությունները, որոնք ցանկանում են հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները (հիմնականում դրանք բաց բաժնետիրական ընկերություններ են), պետք է ապահովեն այդ հաշվետվությունների ստորագրումը ՖՆ-ից ստացած վկայական ունեցող<sup>24</sup> «գլխավոր հաշվապահի» կողմից: Թեպետ գոյություն ունեն նաև հավաստագրման այլ սխեմաներ, որոնց միջոցով անհատները կարող են որակավորվել որպես պրոֆեսիոնալ հաշվապահ, ՖՆ-ի կողմից դրանք չեն ճանաչվում: ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող ֆինանսական հաստատություններում աշխատող գլխավոր հաշվապահներին ներկայացվում է Կենտրոնական բանկի քննությունն անցնելու և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվելու պահանջ:

29. ՖՆ-ի կողմից հավաստագրվելու համար, բավարար կրթական մակարդակ և մասնագիտական աշխատանքի փորձ<sup>25</sup> ունեցող դիմորդները պետք է անցնեն ՖՆ-ի հավաստագրման քննությունը: Պրոֆեսիոնալ հաշվապահի քննության թեմաներն ընտրվում են Ֆինանսների նախարարության կողմից. նման թեմաների թվում են ՀՀՀՀՍ-երը, հաշվապահական հաշվառման ստանդարտներին, Հայաստանում կիրառվող հաշվային պլանին, հարկերին և այլ պարտադիր վճարներին առնչվող օրենքները, ֆինանսական վերլուծությունը: Քննության հարցերը կազմվում են

<sup>22</sup> 2009թ. մարտի դրությամբ:

<sup>23</sup> «Գլխավոր հաշվապահը» հիմնականում պատասխանատու է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և այլ ֆինանսական հաշվետվողականության կազմակերպման համար, ինչպիսին է ներքին կառավարչական հաշվապահությունը:

<sup>24</sup> Որպես կանոն, «գլխավոր հաշվապահները» ունեն ՖՆ-ից ստացած պրոֆեսիոնալ հաշվապահի որակավորում:

<sup>25</sup> Բուհական կրթություն և առնվազն 18 ամսվա մասնագիտական աշխատանքի փորձ, կամ միջնակարգ կրթություն և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:

ՖՆ-ի տարբեր ստորաբաժանումների կողմից՝ մասնավոր հատվածի (հաշվապահական և աուդիտորական ընկերություններ, պրակտիկ աշխատանքով զբաղվողներ և այլն) աջակցությամբ: 2006-2008 թվականների ընթացքում շուրջ 222 մարդ մասնակցել է հաշվապահի վկայական ստանալու քննություններին, որոնց անցողիկության միջին ցուցանիշը կազմել է մոտ 38 տոկոս (շուրջ 85 մարդ) և համապատասխանաբար 199 մարդ մասնակցել է աուդիտորի վկայական ստանալու քննությանը, իսկ անցողիկության ցուցանիշը կազմել է 26 տոկոս (շուրջ 52 մարդ):

30. ՖՆ-ի կողմից տրվող պրոֆեսիոնալ հաշվապահի վկայականը ուժի մեջ է հինգ տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո հաշվապահները պետք է վերստին և ամբողջությամբ անցնեն հավաստագրման քննության ընթացակարգը՝ ՖՆ-ից կրկին վկայական ստանալու համար: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծի համաձայն, նորից քննություն և հավաստագրում անցնելու փոխարեն հաշվապահները պետք է տարվա ընթացքում լրացնեն շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) որոշակի ժամաքանակ: ՖՆ-ը նտադիր է թույլատրել ՇՄԶ-ի միջոցառումների իրականացումը երրորդ կողմ հանդիսացող ծառայություններ մատուցողների միջոցով և նախատեսում է ավելի շուտ վերահսկել, քան իրականացնել այս գործառույթը:

31. Հայաստանում ինչպես հաշվապահների, այնպես էլ աուդիտորների համար գործում է մեկ հիմնական մասնագիտական կազմակերպություն՝ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ): ՀՀԱԱ-ն ստեղծվել է 1997 թվականին, իսկ 2005-ին դարձել է Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ) թղթակից անդամ: ՀՀԱԱ-ն ունի 216 լիիրավ և շուրջ 500 թղթակից անդամ<sup>26</sup>: Ասոցիացիան շարունակում է զգալի աջակցություն ստանալ միջազգային հանրությունից: Այդ աջակցության շնորհիվ, ՀՀԱԱ-ն մշակել է հավաստագրման բարձրորակ սխեմա, որը հիմնված է երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ԵՈՀԱ) կողմից կիրառվող սխեմայի վրա և գնահատվում է վերջինիս կողմից: Սխեման ներառում է հավաստագրման եռաստիճան համակարգ, որը հիմնված է անցած մոդուլների քանակի վրա և նախատեսում է հետևյալ որակավորումները. հավաստագրված հաշվետար (շնորհվում է ֆինանսական հաշվետվությունների կազմման վերաբերյալ առաջին մոդուլը և ղեկավարության համար ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ երկրորդ մոդուլն անցնելու դեպքում), հավաստագրված հաշվապահ (շնորհվում է Հայաստանում կարպորատիվ և առևտրային իրավունքի, առևտրային հարկման, ֆինանսական կառավարման և հսկողության,

<sup>26</sup> Շուրջ 500 թղթակից անդամները հիմնականում ուսանողներ են:

ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ հետագա մոդուլներն անցնելու դեպքում) և հավաստագրված աուդիտոր (շնորհվում է առաջին վեց մոդուլները, ինչպես նաև յոթերորդ՝ աուդիտի և ներքին հսկողության վերաբերյալ մոդուլն անցնելու դեպքում): Քանի որ ՀՀԱԱ-ի մոդուլների ավելի քան 90 տոկոսը հիմնված է ԵՌՀԱ-ի մոդուլների վրա, ՀՀԱԱ-ի հավաստագրման բարձրագույն աստիճանին (հավաստագրված աուդիտոր) հասնելն ազատում է ԵՌՀԱ-ի գնահատման տասնչորս մոդուլներից վեցից: Ներկայումս ՀՀԱԱ-ի սխեմայով հավաստագրման գործընթացին մասնակցում է 336 մարդ: Այդ գործընթացն ավարտելուց և ՀՀԱԱ-ի լիիրավ անդամ դառնալուց հետո պահանջվում է տարեկան ապահովել առնվազն 40 ժամ շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄՁ) ժամաքանակ:

32. **Թեպետ վերջին մի քանի տարվա ընթացքում ՀՀԱԱ-ն զգալի առաջընթաց է ունեցել, զարգացնում է իր միջազգային կապերը, ձևավորել է հավաստագրման հուսալի սխեմա և դարձել ՀՄԴ-ի թղթակից անդամ, կազմակերպությունը երկու խոշոր խնդիր ունի:** Դրանցից առաջինը շուկայում ՀՀԱԱ-ի ճանաչման և ներկայության բացն է: ՀՀԱԱ-ի գնահատմամբ, Հայաստանում կան մի քանի հազար պոտենցիալ անդամներ (այսինքն՝ պրոֆեսիոնալ հաշվապահներ), որոնցից ընդամենը մի քանի հարյուրն են այսօր հանդիսանում ասոցիացիայի անդամ: Փոքրաթիվ են այն ընկերությունները, -բուհերն ու կազմակերպությունները, որոնք տեղյակ են ՀՀԱԱ-ի ու դրա հավաստագրման սխեմայի մասին: Սա մասամբ կարող է պայմանավորված լինել ՖՆ-ի կողմից ՀՀԱԱ-ի հավաստագրումը չճանաչելու հանգամանքով և/կամ ՀՀԱԱ-ի մարքեթինգային քաղաքականության ու կազմակերպությանն անդամակցության շահեկան կողմերի ներկայացման հարցում ունեցած դժվարություններով: Գնահատման ու ներկայության այս բացը կաշկանդում է կազմակերպության՝ իր անդամների քանակն ավելացնելուն ուղղված ջանքերը, իսկ դրա արդյունքում նաև՝ համապատասխան միջոցներ հավաքագրելու և ինքնաֆինանսավորվող մարմին դառնալու ունակությունը: Երկրորդ, ՀՀԱԱ-ում առկա են կորպորատիվ կառավարման հետ կապված լուրջ խնդիրներ, որոնց անհապաղ լուծումը կազմակերպության հետագա առաջընթացն ապահովելու նախապայման է: ՀՀԱԱ-ի ներկայիս կանոնադրությամբ նախատեսված՝ նախագահի և գործադիր տնօրինության պարբերական ընտրությունները որոշակի դժվարություններ են ստեղծում՝ հանգեցնելով նշված պաշտոններում ընտրությունների ձգձգմանը և կազմակերպության ներսում կոնֆլիկտային իրավիճակների առաջացմանը: Արդյունքում, ՀՀԱԱ-ն անցյալ տարվա ընթացքում ստիպված է եղել իրավիճակ մի շարք արտահերթ ընդհանուր ժողովներ՝ իր գործունեության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով: Կառավարման հարցերին առնչվող այս խնդրի վերաբերյալ որոշման կայացումը ՀՀԱԱ-ին թույլ կտա ՖՆ-ի և

մասնագիտությանն առնչվող այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ լուծել ճանաչման խնդիրը:

33. Փոքրաթիվ են հաշվապահական հաշվառման բնագավառում միջազգայնորեն ճանաչված անգլիալեզու որակավորումներ, ինչպիսիք են ԵՌՀԱ-ի կամ ամերիկյան Որակավորված հանրային հաշվապահների (ՈՀՀ) որակավորումները, ունեցող հայաստանցիները: Նման որակավորում ստացածների մեծ մասն աշխատում են աուդիտորական խոշոր ընկերություններում և միջազգային կազմակերպություններում: Բացի այդ, հայաստանյան օրենսդրությունը ՖՆ-ի կողմից իրականացվող հավաստագրում է պահանջում միայն փոքրաթիվ պրոֆեսիոնալ հաշվապահների համար: Արդյունքում, փոքր է այն պրոֆեսիոնալ հաշվապահների թիվը, ովքեր ունեն ՖՆ-ից, ՀՀԱԱ-ից, ԵՌՀԱ-ից կամ այլ կազմակերպությունից ստացած մասնագիտական որակավորում: Շատ հաշվապահներ գրեթե կամ ընդհանրապես չեն ստացել ֆորմալացված ուսուցում հաշվապահական հաշվառման արդիական, միջազգայնորեն ճանաչված եղանակների ու ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ (բացառությամբ բուհերում կամ ուսումնարաններում ստացած սահմանափակ գիտելիքների): Ավելին, շատ հաշվապահներ կենտրոնանում են միայն հարկային նպատակներով վարվող հաշվապահական հաշվառման վրա և պատշաճ ուշադրություն չեն դարձնում ֆինանսական հաշվետվողականությանն ուղղված հաշվապահությանը: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ընկերությունները պարտավոր են ներկայացնել ֆինանսական տեղեկատվություն հարկային, բայց միայն սակավաթիվ դեպքերում՝ ֆինանսական հաշվետվողականության նպատակներով: Արդյունքում, թեպետ Հայաստանում ընդունվել են ՖՀՄՍ-երի վրա հիմնված ՀՀՀՀՍ-եր,<sup>27</sup> հաշվետվություններ պատրաստողներից շատերի ջանքերը կենտրոնացած են եղել դրանց պահանջները հասկանալու և իրականացնելու ուղղությամբ: Սկզբունքների վրա հիմնված հաշվապահական հաշվառման ստանդարտները, ինչպիսիք են ՀՀՀՀՍ-երն և ՖՀՄՍ-երն, որոշակի մեկնաբանություն, հաշվապահական գնահատականներ են պահանջում և միանգամայն տարբեր են նախկինում կիրառվող՝ խիստ կանոնակարգված, կանոնների վրա հիմնված պահանջներից: Ֆինանսական հաշվետվություններ պատրաստողների կարողությունները և, դրանցով պայմանավորված, ֆինանսական հաշվետվողականության որակը, կախված է Հայաստանի բոլոր հաշվապահների՝ ՀՀՀՀՍ-երով և ՖՀՄՍ-երով առաջ քաշվող սկզբունքներն ու գաղափարները հասկանալու և կիրառելու ունակության բարելավումից<sup>28</sup>: Մինչ ՖՆ-ը պատրաստվում է ՀՀՀՀՍ-երը փոխարինել ՖՀՄՍ-երով, ֆինանսական

<sup>27</sup> ՀՀՀՀՍ-երը հիմնված են 2001 թվականի դրությամբ ՖՀՄՍ-երի վրա:

<sup>28</sup> Կարևոր է նշել, որ ընդհանուր առմամբ իրավիճակը որոշակիորեն բարվոք է ֆինանսական հատվածում՝ տնտեսության մյուս ճյուղերի համեմատ:

հաշվետվություններ պատրաստողների կողմից հաշվապահական հաշվառման ժամանակակից հասկացությունների ընկալման մակարդակի բարելավումը պետք է լինի ուշադրության կենտրոնում:

## ***Բ.2. Աուդիտի մասնագիտությունը***

34. Թեպետ Հայաստանում գործում են պրոֆեսիոնալ աուդիտորների մասնագիտական հմտությունների հավաստագրման մի շարք սխեմաներ (ԵՈՂԱ, ՀՀԱԱ և այլն), հավաստագրման միակ հավատարմագրված սխեման, որը տալիս է պրոֆեսիոնալ աուդիտորի լիցենզիա և պրակտիկայով զբաղվելու հնարավորություն, ՖՆ-ի սեփական հավաստագրման սխեման է: 2006 թվականի դրությամբ ՖՆ-ի կողմից հավաստագրվել և լիցենզավորվել են 155<sup>29</sup> պրոֆեսիոնալ աուդիտորներ: ՖՆ-ի կողմից որպես պրոֆեսիոնալ աուդիտոր հավաստագրվելու համար անհրաժեշտ է ունենալ բարձրագույն տնտեսագիտական կրթություն և նախորդող հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, կամ՝ բարձրագույն ոչ տնտեսագիտական կրթություն և նախորդող յոթ տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ: Բացի այդ, Հայաստանում աուդիտորական պրակտիկայով զբաղվելու նպատակով հավաստագրվելու համար բոլոր թեկնածուները պետք է անցնեն ՖՆ-ի հավաստագրման քննությունը:

35. ՖՆ-ի պրոֆեսիոնալ աուդիտորների հավաստագրման քննությունը մշակվել է քննական հանձնաժողովի կողմից, որի կազմում օրենքով սահմանված կարգով ներառվում են ՖՆ-ի չորս ներկայացուցիչ, ԿԲ-ի երկու ներկայացուցիչ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու բուհերի ներկայացուցիչներ: Քննությունը բաղկացած է հարյուր բազմակի ընտրությամբ հարցերից և վեց ավելի ծավալուն, գրավոր հարցերից, և վերաբերում է հարկային, հաշվապահական հաշվառման, առևտրային իրավունքի ու աուդիտի բնագավառներին: 2006 թվականին քննության մասնակցած 95 դիմորդներից 28-ը (30 տոկոսը) հաջողությամբ հանձնել են քննությունը:

36. 2001-2006թթ. ժամանակահատվածում ՖՆ-ը պրոֆեսիոնալ աուդիտորների մասնագիտական հավաստագրման քննություններ չի անցկացրել, ինչի արդյունքում լիցենզավորված պրոֆեսիոնալ աուդիտորների քանակը երկրում չի աճել: ՖՆ-ի կարծիքով, 2006 թվականին անցկացված քննության նկատմամբ հետաքրքրության մակարդակը կաճի, և գալիք

<sup>29</sup> 2009թ. մարտի դրությամբ Հայաստանում կա 153 հավաստագրված հաշվապահ և 75 հավաստագրված աուդիտոր:

տարիներին ավելի մեծ թվով աուդիտորներ կփորձեն անցնել ՖՆ-ի մասնագիտական հավաստագրման գործընթացը: Բացի այդ, առաջիկա մի քանի տարվա ընթացքում Հայաստանն ակնկալում է նոր աուդիտորական ընկերությունների, այդ թվում՝ միջազգային ցանցային կազմակերպությունների մուտքը շուկա: Սա ամենայն հավանականությամբ կմեծացնի հավաստագրման նկատմամբ հետաքրքրությունը և երկրում կավելացնի հավաստագրված, լիցենզավորված աուդիտորների քանակը: Այդուհանդերձ, հավաստագրման ռեժիմի վարչարարության որոշ կողմեր պետք է բարելավվեն՝ քննական համակարգի լիարժեք թափանցիկության ապահովման և զարտուղի ճանապարհների կիրառության ռիսկերի ու կոռուպցիայի մասին անհիմն հայտարարությունների բացառման համար, որոնք կարող են նվազեցնել գործընթացի արդարության նկատմամբ վստահությունը:

**37. Մինչև վերջերս ՖՆ-ի կողմից տրվող պրոֆեսիոնալ աուդիտորի հավաստագիրը ուժի մեջ էր հինգ տարվա ընթացքում:** Այդ ժամկետը լրանալուց հետո պրոֆեսիոնալ աուդիտորները (պրոֆեսիոնալ հաշվապահների նման) պետք է վերստին անցնեն հավաստագրման քննության ընթացակարգը՝ վերահավաստագրվելու համար: Աուդիտորական գործունեության մասին նոր օրենքի նախագծով այս պահանջը հանվում է և փոխարինվում տարվա ընթացքում շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄՁ) որոշակի նվազագույն ժամաքանակ լրացնելու պահանջով:

**38. Ինչպես վերը նշվեց, երկրում գործում է մեկ հիմնական մասնագիտական ասոցիացիա՝ ՀՀԱԱ-ն, որն էլ ներկայացնում է ինչպես հաշվապահական հաշվառման, այնպես էլ աուդիտի մասնագիտությունը:** Կրթության ու մասնագիտական աշխատանքային փորձի որոշակի պայմանների բավարարող և ասոցիացիայի կողմից առաջարկվող բոլոր յոթ մոդուլների քննությունները հաջողությամբ հանձնած անձինք իրավասու են հավաստագրվել և դառնալ ՀՀԱԱ-ի անդամ: ՀՀԱԱ-ն իր անդամներից պահանջում է աուդիտի իրականացման ընթացքում հետևել ՀՀԱԱ-երին<sup>30</sup> և աուդիտի հաշվետվությունում բացահայտել դրանցից բոլոր շեղումները:

**39. Գոյություն ունի կարծիք, որ Հայաստանում գործող աուդիտորները և աուդիտորական ընկերությունները միմյանցից էապես տարբերվում են իրականացվող աուդիտի որակով:** Եթե միջազգային ցանցերի

---

<sup>30</sup> Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներ, որոնք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) թարգմանությունն են: Այդուհանդերձ, ինչպես հաշվապահական հաշվառման ստանդարտների դեպքում, ԱՄՍ-երի թարգմանության և որպես ՀՀԱԱ-եր ընդունման միջև ընկած ժամանակային միջակայքերը հանգեցնում են ԱԵՄՍԽ-ի կողմից հրապարակված վերջին ԱՄՍ-երի և Հայաստանում աուդիտորների կողմից կիրառվող ստանդարտների միջև տարբերություններին:

անդամ տեղական ընկերություններն օգտվում են մայր ընկերության որակի ներքին հսկողության ընթացակարգերից, ապա բազմաթիվ տեղական ընկերություններ ստիպված են հույսը դնել բացառապես իրենց սեփական, սահմանափակ ռեսուրսների ու փորձի վրա: Արդյունքում ձևավորվել է կարծիք, որ միայն մի քանի տեղական ընկերություններ են ի վիճակի ապահովել բարձրորակ աուդիտ, և որ բացի այդ ընկերություններից մնացածի մոտ աուդիտի որակը չափազանց ցածր է՝ անգամ մինչև որևէ փաստացի երաշխիքներ չտալու աստիճան: Տեխնիկական գրագիտության, փորձառության մակարդակի և մատչելի ռեսուրսների առումով աուդիտորական ընկերությունների միջև առկա մեծ տարբերությունները աուդիտի որակի էական տատանումների պատճառ են հանդիսանում:

#### **Գ. Մասնագիտական կրթությունը և ուսուցումը**

40. Հայաստանում հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում մասնագիտական կրթությունը և ուսուցումն անհրաժեշտ են կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության գործընթացի բոլոր մասնակիցներին: Այդ գործընթացի տարբեր մասնակիցներից պահանջվում է բանիմացության տարբեր մակարդակ ու տեսակներ: Մասնավորապես, ֆինանսական հաշվետվություններ պատրաստողներին անհրաժեշտ են այն ստանդարտների վերաբերյալ պատշաճ գործնական գիտելիքներ, որոնց համաձայն պետք է պատրաստեն այդ հաշվետվությունները. ներկայումս այդ ստանդարտներն են ՀՀՀՅՍ-երը և ՖՀՄՍ-երը: Հաշվետարներին անհրաժեշտ է տեղյակ լինել միայն իրենց կողմից օգտագործվող համակարգի հիմունքներին: Աուդիտորները պետք է ավելի բարձրակարգ գիտելիքներ ունենան թե աուդիտորական ստանդարտների ու աուդիտի տեխնիկայի, թե հաշվապահական հաշվառման ստանդարտների վերաբերյալ: Ոլորտը կարգավորողները կարիք ունեն տվյալ ոլորտի ֆինանսական հաշվետվողականությանն առնչվող օրենքների ու կանոնակարգերի խորացված իմացության, իսկ հարկային մարմնի աշխատակիցները պետք է տեղյակ լինեն ինչպես հարկման կանոններին, այնպես էլ այդ կանոնների և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքների միջև փոխադարձ կապերին: Հաշվապահական հաշվառման բնագավառում կրթությունը և ուսուցումն իրականացվում են երեք եղանակով՝ բուհական կրթության համակարգի միջոցով, ֆինանսների նախարարության (ՖՆ) և/կամ ՀՀԱԱ-ի կողմից իրականացվող մասնագիտական հավաստագրման միջոցով և մասնագիտական կազմակերպությունների կողմից կազմակերպվող մասնագիտական զարգացման դասընթացների միջոցով:

41. **Հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառում կրթությունը** Հայաստանում որպես կանոն իրականացվում է բուհերի, վարժարանների ու բիզնես դպրոցների միջոցով՝ որպես հաշվապահական հաշվառման, տնտեսագիտության, մենեջմենթի կամ գործարար կառավարման գծով որակավորում շնորհող ուսումնական ծրագրերի բաղկացուցիչ մաս: Ընդհանուր առմամբ, բուհերը դժվարություններ չունեն այս ծրագրերով ուսանողների հավաքագրման հարցում և, որպես կանոն, նշված որակավորումները ձեռք բերելու համար ուսանողներից պահանջվում է մասնակցել հաշվապահական հաշվառման բնագավառի մի շարք դասընթացների: Այդ դասընթացների ծրագրով սովորաբար նախատեսվում է ՀՀՀՅՍ-երի ուսուցում, իսկ որոշ դեպքերում նաև անդրադարձ է կատարվում ՀՀՀՅՍ-երի (որ հիմնված են 2001 թվականի դրությամբ գործող ՖՀՄՍ-երի վրա) և ներկայիս ՖՀՄՍ-երի միջև տարբերություններին: Հաշվապահության բնագավառի դասընթացների ուսումնական պլանը ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ֆինանսական և կառավարչական հաշվապահությունը, հարկումը և ֆինանսական վերլուծությունը:

42. **Բուհերը նաև հայերեն ուսումնական և դիդակտիկ նյութերով պատշաճ հագեցվածության խնդիր ունեն:** Գրքերի ու նյութերի մեծ մասը, որոնցում քննարկվում են հաշվապահական հաշվառման ու աուդիտի արդի խնդիրները, առկա են միայն անգլերենով: Սա խոչընդոտում է հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը դասախոսներից ուսանողներին:

43. **Մի քանի տարի առաջ Հայաստանում իրականացվել է «դասավանդողների վերապատրաստման» ծրագիր, որը գնահատվել է որպես միանգամայն հաջողված ու օգտակար՝ բուհական դասախոսների գիտելիքների արդիականացման առումով:** Այդուհանդերձ, դասախոսների բնորոշմամբ, ծրագրի հիմնական թերությունը դրա ոչ կայուն բնույթի մեջ է. դասախոսները նշում են նաև բուհական դասախոսների գիտելիքներն արդիական պահելու որոշակի սիստեմատիկ գործընթացի անհրաժեշտության մասին: Քանի որ նախքան աշխատանքի շուկա մուտք գործելը ապագա հաշվապահների համար ուսման կամ կրթության միակ աղբյուրը հաճախ դասախոսն է, վերապատրաստման այսպիսի սիստեմատիկ ծրագիրը պետք է կենտրոնանա ոչ միայն դասախոսների հմտությունները հաշվապահական հաշվառման ու աուդիտի այսօրվա միջավայրի համեմատ արդիականացնելու, այլև՝ եվրոպական և հյուսիս-ամերիկյան բուհերի հետ երկարաժամկետ հարաբերություններ հաստատելու վրա, ինչը թույլ կտա ապահովել հայաստանցի դասախոսների գիտելիքների արդիականացման կայուն համակարգի ձևավորումը (օրինակ՝ խորհրդաժողովների, միջազգային



փոխանակման ծրագրերի միջոցով) հաշվապահական հաշվառման ու աուդիտի վաղվա միջավայրին համահունչ կերպով: Քանի որ այս խնդիրը բնութագրական է տարածաշրջանի բոլոր բուհերի համար, Հայաստանը պետք է դիտարկի հարևան երկրների բուհերի հետ համագործակցության հնարավորությունները՝ «դասավանդողների վերապատրաստման» տարածաշրջանային կայուն ծրագիր ստեղծելու նպատակով:

**44. Ինչպես նշվել է հաշվապահության և աուդիտի մասնագիտությունների մասին բաժիններում (II.Բ.1 և II.Բ.2), ներկայումս միայն ՀՀԱԱ-ն է, որ իր անդամների առջև պահանջ է դնում մասնակցել շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄՁ) միջոցառումների: ՀՀԱԱ-ի անդամները ՇՄՁ-ի սահմանված նվազագույն 40 ժամ ժամաքանակը հիմնականում լրացնում են ՀՀԱԱ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցությամբ, որոնց ընթացքում լսվում են զեկույցներ և տեղի ունենում քննարկումներ հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի արդիական խնդիրների վերաբերյալ: Այդ հանդիպումների ընթացքում, ի թիվս այլոց, դիտարկվում են հարկման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական կառավարման ոլորտներին առնչվող թեմաներ ու հարցեր, ինչպես նաև ՀՀԱԱ-ի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագիրը: Ինչպես արդեն նշվել է, առաջիկա տարիներին Ֆինանսների նախարարությունը (ՖՆ) հավաստագրված հաշվապահների ու աուդիտորների համար կսահմանի պահանջ՝ ՇՄՁ-ի միջոցառումներին որոշակի նվազագույն մասնակցություն ապահովելու վերաբերյալ: ՖՆ-ը նախատեսում է, որ ՇՄՁ-ն կարող է կազմակերպվել երրորդ կողմերի միջոցով՝ նախարարության վերահսկողության ներքո:**

**45. Ներկայումս թե՛ ՖՆ-ն, թե՛ ՀՀԱԱ-ն առաջարկում են հավաստագրման սխեմաներ: Թեպետ երկու դեպքում էլ այդ սխեմաները կոչված են ստուգելու անհատի գիտելիքները հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառին առնչվող մի ամբողջ շարք թեմաների ու հարցերի վերաբերյալ, ՀՀԱԱ-ի որակավորման սխեման գնահատվում է ԵՈՀԱ-ի կողմից: Որպես այդպիսին, այն հաջողությամբ ավարտելու դեպքում անձը կարող է ազատվել ԵՈՀԱ-ով հավաստագրման (որ հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի միջազգայնորեն ճանաչված հավաստագրում է) համար պահանջվող գնահատման տասնչորս մոդուլներից վեցից: ՀՀԱԱ-ի հավաստագրումը այն ստացած պրոֆեսիոնալների համար խթան է ստեղծում՝ իրենց մասնագիտական զարգացումը ԵՈՀԱ-ի հավաստագրում ստանալու միջոցով շարունակելու համար: Ներկայումս առկա՝ ջանքերի կրկնորդումը նվազեցնելու և մասնագիտական հմտությունների ձեռքբերման պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով, ՖՆ-ը պետք է դիտարկի Հայաստանում**

պրոֆեսիոնալ հաշվապահների ու աուդիտորների հավաստագրումը ՀՀԱԱ-ին պատվիրակելու տարբերակը: Մասնագիտական կազմակերպությանն այս գործառույթի պատվիրակման համար պետք է պայման հանդիսանա այդ կազմակերպության կողմից ՖՆ-ի սահմանած չափանիշները բավարարելը և հանրային խիստ հսկողության ենթարկվելը, օրինակ՝ նախատեսվող Հաշվապահների և աուդիտորների պալատի կողմից: Նման պատվիրակում տեղի ունենալու դեպքում ՖՆ-ը կարող է պահպանել աուդիտորական գործունեության լիցենզիա տրամադրելու և ՀՀԱԱ-ի հավաստագրման սխեմայի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառույթը:

## **Դ. Հաշվապահական հաշվառման ու աուդիտի ստանդարտների սահմանումը**

46. Ընդհանուր ֆինանսական հաշվետվողականության պահանջների ձևավորման նպատակով հաշվապահական հաշվառման ստանդարտների սահմանման գործընթացի շրջանակներում, 2001 թվականի դրությամբ գործող ՀՀՄՍ-երի հիման վրա մշակվեցին Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՍ): «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Ֆինանսների նախարարությունը (ՖՆ) իրավասու է սահմանել հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ոլորտին առնչվող այլ կանոնակարգող ակտեր: ՖՆ-ի Աուդիտի և հաշվապահական հաշվառման մեթոդաբանության վարչությունը 1997 թվականին ձեռնամուխ եղավ ՀՀՄՍ-երի թարգմանությանն ու Հայաստանում դրանց ընդունմանը: 1999 թվականին ՖՆ-ն ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ հայերեն թարգմանեց ՀՀՄՍ-երը և դրանք որոշ ոչ էական փոփոխություններով ընդունեց որպես առաջին 15 ՀՀՀՀՍ-եր: Գործող ՀՀՀՀՍ-երը ՀՀՄՍ 2001-ից էապես չեն տարբերվում: Հիմնական տարբերությունները կայանում են հետևյալում.

- ՀՀՄՍ 7 «Դրամական հոսքեր». անուղղակի մեթոդը չի թույլատրվում,
- Հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին, կապիտալի փոփոխությունների և դրամական հոսքերի վերաբերյալ հաշվետվական ձևերը սահմանվում են լիազորված մարմնի, այսինքն՝ ՖՆ-ի կողմից և պարտադիր են բոլոր կազմակերպությունների համար,
- Տեքստում ներառված են որոշ պարզաբանումներ, հատկապես՝ տերմինների ու սահմանումների մասով, հիմնականում դրանք հայ օգտագործողին ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

2001 թվականից ի վեր ՀՀՀՀՄ-երում որևէ փոփոխություններ չեն կատարվել: Արդյունքում, այժմ գործող ՖՀՄՍ-երի և ՀՀՀՀՄ-երի միջև առկա են էական տարբերություններ: Այդ տարբերությունների ավելի մանրամասն վերլուծությունը ներկայացված է «Հաշվապահական հաշվառման ստանդարտներ՝ կազմը և պրակտիկ կիրառությունը» բաժնում:

47. 2001 թվականին ՖՆ-ը ՀՀՀՀՄ-երին կից ընդունեց մեթոդաբանական ուղեցույց և հաշվային պլան՝ նպատակ ունենալով ՀՀՀՀՄ-երի ավելի հետևողական կիրառության հարցում աջակցել հայաստանյան ձեռնարկություններին<sup>31</sup>: Անգամ այս մեթոդաբանական ուղեցույցի հրապարակումից հետո ՀՀՀՀՄ-երին համապատասխանության մակարդակը դեռևս շատ ցածր է, հատկապես փոքր և միջին ձեռնարկություններում: Ուստի անհրաժեշտ են կրթական ավելի լայնածավալ ջանքեր, սեմինարներ, ուսուցողական և ուղեցույցային արդիական նյութեր՝ ՀՀՀՀՄ-երի վերաբերյալ գործարար միջավայրի իմացությունը և դրանց կիրառությունը բարելավելու նպատակով: Ներկայումս ՖՆ-ը բավարար ռեսուրսներ չունի այս միջոցառումները ձեռնարկելու համար և պետք է դիտարկի նշված գործառնությունը իր կողմից ճանաչված որևէ մասնագիտական մարմնի պատվիրակելու տարբերակը:

48. Ներկայումս ՖՆ-ը նախատեսում է ՖՀՄՍ-երի կիրառությունը պարտադիր դարձնել Հայաստանում գործող բոլոր ձեռնարկությունների համար: Բանկերի մեծամասնությունը, մի քանի ապահովագրական ընկերություններ և որոշ խոշոր կազմակերպություններ արդեն կամավոր հիմունքով անցել են ՖՀՄՍ-երին՝ ֆինանսական տեղեկատվության առկա և պոտենցիալ օտարերկրյա օգտագործողներին հասանելի դարձնելով ՖՀՄՍ-երով կազմված ֆինանսական հաշվետվությունները: ՖՆ-ում գիտակցում են, որ ՀՀՀՀՄ-երը հնացել են և չեն համապատասխանում ՖՀՄՍ-երին: Իրավիճակը շտկելու նպատակով ՖՆ-ը որոշել է ՀՀՀՀՄ-երը փոխարինել ՖՀՄՍ-երով՝ որպես Հայաստանում ֆինանսական հաշվետվողականության պաշտոնական հիմք: Ներկայումս ՖՆ-ում դիտարկվում է ԱՄՆ ՄՁԳ-ի առաջարկը՝ ՖՀՄՍ-երի թարգմանության թարմացման աշխատանքները ֆինանսավորելու վերաբերյալ, պայմանով, որ երկարաժամկետ հատվածում ապահովվի ՖՀՄՍ-երի հետագա փոփոխությունների ընթացիկ թարգմանության կայուն մեխանիզմի առկայությունը՝ հաշվի առնելով գործող ՖՀՄՍ-երի լրամշակման և նոր ՖՀՄՍ-երի ընդունման հաճախականությունը: Թարգմանությունը նախատեսվում է կատարել Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի հիմնադրամի (ՀՀՄՍԿՀ) պահանջներին համապատասխան: Սրա հետ կապված վարչական ու ֆինանսական ծախսերը զգալի են, և

<sup>31</sup> Այս թեմայի հետագա քննարկման համար տես՝ «Կանոնակարգման դաշտը» բաժինը:

համապատասխան ռեսուրսների հատկացման վերաբերյալ որոշումներ ընդունելիս պետք է հաշվի առնել նաև բարեփոխումների այլ գերակայությունները: Մասնավորապես, հաշվի առնելով Հայաստանում պետական շահ ներկայացնող ընկերություններից բացի գործող ձեռնարկությունների քանակն ու կարևորությունը, պետք է պատշաճ ուշադրություն դարձնել այդ ավելի փոքր ձեռնարկությունների նկատմամբ կիրառվող ֆինանսական հաշվետվողականության ռեժիմի բարելավման առաջնահերթությանը: Հաշվապահական հաշվառման մասին նոր օրենքի նախագծով նախատեսվում է, որ ՖՀՄՍ-երի թարգմանության գործընթացը պետք է իրականացվի Հաշվապահների և աուդիտորների պալատի կողմից, սակայն նախքան այս գործընթացին ձեռնամուխ լինելն անհրաժեշտ է ունենալ ավելի հստակ սահմանված ռազմավարություն:

49. **Բանկերը պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) և ՖՆ-ի կողմից համատեղ համաձայնեցված ընթացակարգերով՝ ՀՀՀՀՄ-երի համաձայն:** Թեև ԿԲ-ը պահանջում է, որ ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվեն ՀՀՀՀՄ-երի համաձայն, այն հաստատել է մի շարք կանոնակարգեր ու հրահանգներ, որոնք տարբերվում կամ հակասում են ՀՀՀՀՄ-երի պահանջներին այնպիսի հարցերում, ինչպիսիք են վարկերի հնարավոր կորուստների դիմաց պահուստավորումը, փոխկապակցված կողմերի սահմանումը և արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների դիմաց պահուստավորումը: Այս տարբերությունների մանրամասները քննարկվում են սույն հաշվետվության բաժին III-ում:

50. **ԿԲ-ին ներկայացվող տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ԿԲ-ի կողմից սահմանված հաշվետվական ձևերի ու ընթացակարգերի համաձայն:** Ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ԿԲ-ն այդ հաշվետվական ձևերն ու ընթացակարգերը սահմանում է՝ հաշվի առնելով գործող միջազգային ստանդարտները (այսինքն՝ ՖՀՄՍ-երը): ԿԲ-ի կողմից սահմանված են շուրջ 40<sup>32</sup> (տարեկան, եռամսյակային, ամսական և շաբաթական) հաշվետվական ձևեր, որոնք առևտրային բանկերը լրացնում ու ներկայացնում են ԿԲ: Այդուհանդերձ, ԿԲ-ի կողմից սահմանված ձևով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և ՀՀՀՀՄ-երի միջև առկա են որոշակի հակասություններ: Մի շարք բանկեր փորձում են հարթել այդ հակասությունները՝ հրապարակելով համակցված ֆինանսական հաշվետվություններ, որոնք պատրաստված են մասամբ ՀՀՀՀՄ-երի, իսկ մասամբ էլ՝ ԿԲ-ի կողմից սահմանված պրուդենցիալ պահանջների պահպանմամբ: Որպես կանոն, աուդիտորներն իրենց

<sup>32</sup> Տարվա ընթացքում առևտրային բանկերի կողմից ՀՀ ԿԲ են ներկայացվում ընդհանուր թվով շուրջ 400 ձևեր:

եզրակացությունները տալիս են ավելի շուտ ԿԲ-ի կանոնակարգերի, քան ՀՀՀՄ-երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

51. Ապահովագրական ընկերությունների համար սահմանված է հաշվապահական հաշվառման հատուկ կարգ և պահանջվում է իրենց ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառել ՀՀՀՄ-երը: Սկսած 2007 թվականի հունվարի 1-ից՝ ապահովագրական ընկերությունները կիրառել են համապատասխանեցված հաշվային պլան: Սկսած 2007 թվականի հոկտեմբերից՝ ապահովագրական ընկերությունները պրուդենցիալ հաշվետվողականության նպատակներով ԿԲ ներկայացնում են մինչև 20 հաշվետվական ձևեր, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ստանդարտ ձևեր, որոնք պետք է կազմվեն ԿԲ-ի կողմից հաստատված կանոնների հիման վրա:

52. ԿԲ-ն իրավասու է իր կարգավորման ներքո գտնվող ընկերությունների համար սահմանել ֆինանսական հաշվետվողականության պահանջներ: Այդուհանդերձ, օրենքի համաձայն, այդ պահանջները չպետք է հակասեն ՀՀՀՄ-երին: ՀՀ ԿԲ-ն սահմանել է բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների հատուկ ստանդարտ ձևեր: Այսպիսի հաշվետվական ձևեր են մշակվում ներդրումային ընկերությունների համար և ակնկալվում է, որ դրանք ուժի մեջ կմտնեն 2009թ. հունվարի 1-ից: Ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստվեն ՀՀՀՄ-երի համաձայն<sup>33</sup>:

53. Ըստ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում պարտադիր աուդիտն իրականացվում է Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտները թարգմանվել և ընդունվել են որպես Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներ (ՀՀԱՍ): Այդուհանդերձ, ինչպես հաշվապահական հաշվառման ստանդարտների դեպքում, ԱՄՍ-երի թարգմանության և որպես ՀՀԱՍ-եր ընդունման միջև ընկած ժամանակային միջակայքերը հանգեցնում են ԱԵՄՍԽ-ի կողմից հրապարակված վերջին ԱՄՍ-երի և Հայաստանում աուդիտորների կողմից կիրառվող ստանդարտների միջև տարբերություններին:

<sup>33</sup> Հաշվապահական հաշվառման մասին օրենքի նախագծի համաձայն՝ ՀՀՀՄ-երը բանկերի համար պարտադիր կլինեն 2009թ. հունվարի 1-ից, իսկ այլ ֆինանսական հաստատությունների համար՝ 2010թ. հունվարի 1-ից:

## Ե. Հաշվապահական հաշվառման ու աուդիտի ստանդարտների կիրարկումը

### Ե.1. Հաշվապահական հաշվառման (ֆինանսական հաշվետվողականության) ստանդարտների կիրարկումը

54. 2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ), որ նախկինում պատասխանատու էր միայն բանկային հատվածի համար, ստանձնել է ապահովագրության և արժեթղթերի ոլորտների վերահսկողության ու կարգավորման գործառույթը: Այս բարեփոխման հայտարարված նպատակը անկախ ու արդյունավետ միասնական վերահսկողության և կարգավորման համակարգի ներդրումն էր՝ կայուն ու պատշաճ գործող ֆինանսական համակարգի առկայությունն ապահովելու և սպառողների շահերը պաշտպանելու համար: Թվարկված երեք կարգավորիչ գործառույթները ԿԲ-ի հովանու ներքո միավորելու հիմնական պատճառները հետևյալն էին.

- Կայուն զարգացման հնարավորությունների ստեղծում ֆինանսական հոլդինգների համար, որոնց գործունեության տարբեր տեսակները կարգավորվում էին տարբեր կարգավորողների կողմից՝ վերջիններիս միջև նվազագույն համագործակցության/ համակարգման կամ դրանց իսպառ բացակայության պայմաններում.
- Կարգավորման բացերի վերացում, երբ առանձին կարգավորող մարմիններ ընդունում են օրենսդրական ակտեր, որոնք հաշվի չեն առնում ֆինանսական շուկայի մյուս հատվածներում գործող նորմերն ու կարգերը.
- Կարգավորողների գործառնությունների, ֆինանսավորման և անկախության բարելավում. կարգավորման լիազորությունը ԿԲ-ի հովանու ներքո միավորելը համարվում էր լավագույն լուծումը ընդհանուր համակարգի բարելավման համար:

ԿԲ-ն իրավասու է իրականացնել առևտրային բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի, Հայաստանի ֆոնդային բորսայի և Հայաստանի ֆոնդային բորսայում (ՀՖԲ) գործարքներ կատարելու իրավունք ունեցող ու ցուցակված ընկերությունների նկատմամբ հաշվապահական հաշվառման ստանդարտների<sup>34</sup> կիրարկումը: Այն կարող է ուսումնասիրել ու գնահատել այդ ընկերությունների ֆինանսական արդյունքները, ստուգել ներկայացված հաշվետվություններում արտացոլված տվյալների ու տեղեկատվության ճշտությունը: Ընդհանուր ֆինանսական

<sup>34</sup> ՀՀ ԿԲ սահմանում է նաև բանկերի ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտորների ընտրության չափանիշները, սակայն չի կիրարկում աուդիտի ստանդարտների կիրառումը:

հաշվետվությունների ամբողջական փաթեթի ուսումնասիրության վերաբերյալ որևէ ուղղակի հղում առկա չէ:

55. **ՀՀ ԿԲ-ի Ֆինանսական վերահսկողության վարչության առաջնահերթ խնդիրն ավելի շուտ պրոլոնգացնել, քան ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվողականության կիրարկումն է:** Բանկերը պարտավոր են ներկայացնել շուրջ 40 օրական, ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով պատրաստվող, աուդիտի ենթարկված<sup>35</sup> պրոլոնգացիալ հաշվետվությունների ձևեր: Փաստաթղթային վերահսկողության ընթացքում ներկայացված հաշվետվությունների ճշտությունը ստուգվում է տեսչական ստուգումների միջոցով<sup>36</sup>: Նման ստուգումների ընթացքում ԿԲ աշխատակիցները հիմնականում ուսումնասիրում են բանկի գործունեության համապատասխանությունը ԿԲ-ի կողմից սահմանված պրոլոնգացիալ նորմերին ու կանոնակարգերին: Բացի այդ, առանձնակի ուշադրություն է դարձվում ԿԲ կողմից սահմանված «Ներքին հսկողության նվազագույն պայմանների» պահպանմանը և ռիսկերի կառավարմանը: Վերահսկողներն ուսումնասիրում են նաև աուդիտորների կողմից բանկի ղեկավարությանն ուղղված մամակները՝ բանկում առկա թերություններին տեղեկանալու և ստուգելու համար, թե արդյո՞ք աուդիտորների բացահայտած խնդիրները և կատարած առաջարկները (հիմնականում ներքին հսկողության համակարգի և հաշվապահական հաշվառման քաղաքականության ու պրակտիկայի վերաբերյալ) պատշաճ արձագանք են գտել բանկի կողմից: Թեպետ թվարկվածները արդյունավետ վերահսկողության տեսանկյունից կարևոր են, հարկ է նշել, որ դեպքերի մեծ մասում աուդիտի եզրակացությունը ներկայացվում է այնպիսի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որոնք պատրաստվել են ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների, բայց ոչ՝ ՀՀՀՀՄ-երի հիման վրա: Ուստի աուդիտի եզրակացությունը երաշխիքներ չի տալիս ՀՀՀՀՄ-երին համապատասխանության վերաբերյալ: Պրոլոնգացիալ հաշվետվողականությանն ավելի մեծ կարևորություն տալու արդյունքում նվազ ուշադրություն է դարձվում ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվություններին, որոնք շուկայի մասնակիցների կողմից շուկայական կարգապահության դրսևորմանը նպաստելու հարցում (որ նախատեսված է Բազել 2-ի երրորդ հեռանայան շրջանակներում) կարևոր դեր խաղալով՝ ինքնին կարող են վերահսկողական գործառույթին փոխլրացնող ազդեցիկ գործոն լինել:

<sup>35</sup> Ինչը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջ է (հոդված 58.2): Տարվա ընթացքում առևտրային բանկերի կողմից ՀՀ ԿԲ են ներկայացվում ընդհանուր թվով շուրջ 400 ձևեր:

<sup>36</sup> ՀՀ ԿԲ-ը իրականացնում է ռիսկի վրա հիմնված վերահսկողություն: Բանկում վերստուգումների թիվը որոշվում է տվյալ բանկի ռիսկի բնութագրի հիման վրա:

56. Աուդիտորները պարտավոր են բանկի ֆինանսական վիճակի էական վատթարացման կամ ներքին հսկողության համակարգի լուրջ թերությունների դեպքում ուղղակիորեն տեղեկացնել ԿԲ-ին: ԿԲ-ն օրենքով իրավասու է աուդիտորներից պահանջել և ստանալ աուդիտի հետ կապված ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ աշխատանքային փաստաթղթերը, անգամ եթե այդ տեղեկատվությունը համարվում է գաղտնի: Գործնականում աշխատանքային փաստաթղթերը, որպես կանոն, ԿԲ վերահսկողների կողմից չեն ուսումնասիրվում, և աուդիտորները հազվադեպ են մասնակցում հանդիպումների՝ աուդիտի ընթացքում բացահայտված փաստերը քննարկելու համար: Սակայն ՀՀ ԿԲ-ը ներկայումս աշխատում է այս ոլորտի բարելավման ուղղությամբ:

57. ԿԲ-ն կարող է բանկերի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ պրուդենցիալ հաշվետվողականության վերաբերյալ ԿԲ-ի հրահանգների չկատարման և հաշվապահական հաշվառման, արժանահավատ ֆինանսական տեղեկատվության ներկայացումը կարգավորող կանոնների խախտման համար: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը<sup>37</sup> նախատեսում է, որ որևէ պրուդենցիալ նորմատիվ խախտելու կամ ԿԲ-ին ներկայացվող հաշվետվություններն ուշացնելու դեպքում բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի գումարը չի կարող գերազանցել նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5 տոկոսը: Այլ դեպքերում, ինչպիսիք են հաշվապահական ձևակերպումների կարգը սահմանող կանոնակարգերի և ներկայացվող ֆինանսական տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ պահանջների խախտումները, բանկը կարող է տուգանվել նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1 տոկոսը չգերազանցող գումարի չափով: Հաշվետվողականության ժամկետների խախտման և անարժանահավատ հաշվետվությունների ներկայացման համար կիրառվող պատժամիջոցների համադրությունը վկայում է ձևի նկատմամբ բովանդակության գերակայության տեսանկյունից ոչ համարժեք շեշտադրումների մասին: ԿԲ-ն իրավասու է նաև ուժը կորցրած ճանաչել բանկի լիցենզիան, թեպետ նախորդ երեք տարում նման դեպք չի արձանագրվել: ԿԲ-ն ակտիվորեն գործադրում է պատժամիջոցներ կիրառելու իր իրավասությունը պրուդենցիալ նորմատիվների և ներքին կանոնակարգերի խախտումների դեպքում: Պատժամիջոցների կիրառման ընթացակարգերը ստանդարտացված են, թափանցիկ և ըստ պատշաճի բացահայտված են բանկերին: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել է, այն փաստը, որ ԿԲ-ի վերահսկողական լայն իրավասությունները ըստ պատշաճի չեն կիրառվում ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունների բավարար մակարդակ ապահովելու

<sup>37</sup> «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդված:



համար, խոսում է շուկայական կարգապահությունը բարելավելու առումով ֆինանսական հաշվետվողականության դերի թերագնահատման մասին:

58. ԿԲ-ի ֆինանսական վերահսկողության վարչության Ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանության բաժինը պատասխանատու է ցուցակված ընկերությունների կողմից ՀՀՀՅՍ-երին համապատասխանության մոնիտորինգի ու կիրարկման համար: Ներկայումս նման 14 ընկերություններ հաշվետու են ԿԲ-ին: Նշված 14 ընկերությունները պարտավոր են էլեկտրոնային տեսքով ներկայացվել եռամսյակային և աուդիտի ենթարկված տարեկան հաշվետվություններ, որոնց պետք է պատրաստված լինեն ՀՀՀՅՍ-երի համաձայն: ԿԲ-ի Վիճակագրության վարչությունը հավաքում է այդ հաշվետվությունները և ստուգում ներկայացված ցուցանիշների մաթեմատիկական ճշտությունը: Այնուհետև բաժնի աշխատակիցները հաշվետու անձանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալները համադրում են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված տեղեկատվության հետ, հավաստիանում աուդիտի եզրակացության և ֆինանսական հաշվետվությունների համադրելիության մեջ, ուսումնասիրում դիտարկվող ժամանակահատվածում ֆինանսական հարաբերակցությունների ու ցուցանիշների էական շեղումների պատճառները: Բաժինն ունի հինգ աշխատակից, որոնք ֆինանսապես գրագետ տնտեսագետներ են (այսինքն՝ ծանոթ են հաշվապահական հաշվառման ու աուդիտի պահանջներին): Վարչությունը պարտականությունների տարանջատում չի կատարում. յուրաքանչյուր վերահսկող ուսումնասիրում է ներկայացված հաշվետվությունների, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը: Վերահսկողներն իրականացնում են փաստաթղթային և տեսչական վերահսկողություն՝ (փաստաթղթային և տեսչական) ձեռնարկների համաձայն, իսկ դրանց համապատասխան ստուգաթերթիկները հաստատվում են Կենտրոնական բանկի կողմից: Անցած տարվա ընթացքում իրականացվել է երեք տեսչական ստուգում, որոնց ընթացքում ուսումնասիրվել են ստուգվող ընկերություններում հաշվապահական ձևակերպումները:

59. ԿԲ-ն հաճախ օգտվում է ցուցակված ընկերությունների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու իր իրավունքից. անցած տարվա ընթացքում արժեթղթերի շուկայում ցուցակված 14 ընկերություններից յուրաքանչյուրը տարատեսակ խախտումների համար առնվազն մեկ անգամ ենթարկվել է պատասխանատվության: Խախտումների հիմնական տեսակը հաշվետվությունների ու ներկայացումն է: Չնայած ԿԲ-ն կարողացել է հասնել հաշվետվությունների ժամանակին ներկայացման և մյուս կանոնակարգերին համապատասխանության ապահովման նպատակին, ֆինանսական

հաշվետվությունների որակը դեռևս ցածր, իսկ ՀՀՀՀՍ-երին համապատասխանությունը ոչ միանշանակ է: Ցուցակված ընկերությունների մեծ մասը դեռևս ներկայացնում է ավելի շուտ հարկային, քան ՀՀՀՀՍ-երին լիարժեքորեն համապատասխանող ֆինանսական հաշվետվություններ: ԿԲ-ն պետք է որպես գերակայություն սահմանի ցուցակված ընկերությունների հաշվետվությունների՝ ՀՀՀՀՍ-երին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքները և ապահովի հանրությանը ՀՀՀՀՍ-երին համապատասխանող բարձրորակ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը:

60. **Գոյություն չունեն կիրարկման մեխանիզմներ, որոնք թույլ կտային ապահովել ԿԲ-ի վերահսկողությունից դուրս գտնվող հայկական ընկերությունների համապատասխանությունը ՀՀՀՀՍ-երին:** Ընդհանուր առմամբ, ԿԲ-ի վերահսկողության ներքո գտնվում են միայն 14 ցուցակված ընկերություններ՝ ի լրումն 18 չցուցակված բանկերի և 15 չցուցակված ապահովագրական ընկերությունների ու ապահովագրական բրոքերների՝ արժեթղթերի շուկայի մյուս մասնակիցներից բացի<sup>38</sup>: Հայաստանյան մնացած ընկերությունների մասով գոյություն չունեն ՀՀՀՀՍ-երին համապատասխանության կիրարկման մեխանիզմներ:

61. **Թեպետ ԿԲ-ի հովանու ներքո վերահսկողական գործառույթների միավորումը Հայաստանում զգալի արդյունքների է բերել, անհրաժեշտ են հետագա բարեփոխումներ:** Կարգավորվող ընկերությունների մոնիտորինգի և ֆինանսական հաշվետվողականության՝ ՀՀՀՀՍ-երին կամ ՖՀՄՍ-երին (վերջիններս որպես ազգային ստանդարտներ ընդունվելուց հետո) համապատասխանության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու համար ԿԲ-ն պետք է շարունակի փորձագիտական կարողությունների և ունակությունների զարգացման գործընթացը:

## ***Ե.2. Աուդիտի ստանդարտների կիրարկումը***

62. **Ներկայումս լիցենզավորված աուդիտորների կողմից աուդիտի ստանդարտներին համապատասխանության կիրարկման պարտականությունը դրված է ՖՆ-ի վրա:** Նախարարության Վերահսկողության և լիցենզավորման վարչությունն իրականացնում է բոլոր լիցենզավորված աուդիտորների ու աուդիտորական ընկերությունների գործունեության որակի հսկողության տարեկան ստուգումներ: Բոլոր լիցենզավորված աուդիտորները պետք է նախարարությանը ներկայացնեն եռամսյակային և տարեկան

<sup>38</sup> Ինչպես օրինակ՝ բրոքերներ և դիլերներ:

հաշվետվություններ՝ հավաստելով լիցենզավորման բոլոր պայմաններին իրենց համապատասխանությունը, իսկ տարեկան հաշվետվություններում պետք է ներկայացնեն նաև մանրամասն տեղեկատվություն իրենց կողմից կատարված աուդիտորական ստուգումների քանակի և մատուցված ծառայությունների դիմաց վճարների տեսքով ստացված եկամուտների մասին: Ուսումնասիրությունները կատարվում են ՖՆ-ի աշխատակիցների կողմից իրականացվող տեսչական ստուգումների միջոցով, որոնց ընթացքում հիմնական շեշտադրումը կատարվում է աուդիտորների վարքագծի կանոնների, լիցենզավորման պայմանների և աուդիտի ստանդարտների (ՀՀԱՍ) պահպանման վրա, սակայն հասկանալի է, որ փաստացի իրականացված աուդիտորական ստուգումների որևէ լուրջ տեխնիկական ուսումնասիրություն չի կատարվում: Նման ստուգումներ իրականացնող աշխատակիցների համար սահմանված չէ որակավորված աուդիտոր լինելու կամ աուդիտի բնագավառում ուղղակի աշխատանքային փորձ կամ փորձագիտական կարողություններ ունենալու որևէ պահանջ:

63. **Բացի այդ, ՀՀԱՍ-ն իրականացնում է իր անդամների գործունեության որակի հսկողության որոշ, սահմանափակ շրջանակով միջոցառումներ:** Որպես ՀՄԴ-ի անդամ կազմակերպություն՝ ՀՀԱՍ-ն պետք է հնարավորինս համապատասխանի ՀՄԴ-ի կողմից իր անդամների համար սահմանված Անդամության պահանջների դրույթներին (ԱՊԴ): ԱՊԴ-երից մեկը վերաբերում է որակի հսկողությանը և սահմանում է այն նպատակներն ու ընթացակարգերը, որոնց ՀՀԱՍ-ն պետք է համապատասխանի իր անդամների գործունեության որակի հսկողություն իրականացնելիս: ՀՀԱՍ-ի որակի հսկողությունը հիմնված է իր անդամների համար գործող Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքին և Ներքին ընթացակարգերի ձեռնարկին համապատասխանության ապահովման վրա, որոնցում ամփոփ տեսքով ներառված են ՀՀԱՍ-ի, ՀՄԴ-ի և ՀՀՄՍԽ-ի բոլոր հիմնական պահանջները, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ ստուգաթերթիկներն ու հսկողության նպատակով կիրառվող ստուգողական ձևաթերթերը՝ համապատասխանության ապահովմանն օժանդակելու համար:

64. **Նախարարությունում ռեսուրսների սղության և, մասնավորապես, մասնագետների անբավարար փորձագիտական կարողությունների պատճառով, աուդիտի որակի ստուգման միջոցով աուդիտի ստանդարտներին համապատասխանության կիրարկման ներկայիս ռեժիմն արդյունավետ չէ:** Աուդիտի որակի հսկողության նպատակը պետք է լինի աուդիտի որակի ու ստանդարտների կիրառության բարելավումը. դրա հիմնական նպատակը աուդիտորներին պատժելը կամ պատասխանատվության ենթարկելը չէ, այլ՝ որակի և ուսուցման բացերը բնորոշելն ու պահանջելը, որ աուդիտորները

համապատասխան ուսուցման և մեթոդաբանական բարեփոխումների միջոցով վերացնեն այդ բացերը: Այս ռեժիմի արդյունավետ լինելու համար ստուգումները պետք է իրականացվեն այնպիսի աշխատակիցների կողմից, ովքեր ունեն պատշաճ փորձագիտական կարողություններ և աուդիտի պրակտիկ աշխատանքի պատկառելի փորձ: Հավանական չէ, որ պետական բյուջեից ֆինանսավորվող հաստատության բյուջեի շրջանակներում առաջարկվող աշխատավարձով հնարավոր լինի հաստատության աշխատակազմը համալրել նման կարողություններով օժտված անձանցով:

65. Այս խնդիրը շատ երկրներում, այդ թվում՝ բազմաթիվ եվրոպական երկրներում լուծվում է աուդիտի որակի հսկողության պրակտիկ գործառույթը կառավարության կողմից պատվիրակելով մասնագիտական կազմակերպություններին՝ դրանց նկատմամբ սահմանելով պատշաճ վերահսկողության ռեժիմ: Նման մասնագիտական կազմակերպությունները կարող են օգտվել անհրաժեշտ փորձագիտական կարողություններից ու ռեսուրսներից՝ որակի արդյունավետ հսկողություն և ստուգումներ իրականացնելու համար (կամ փոխադարձ ստուգումների, կամ հատուկ այդ խնդիրով զբաղվող վերստուգող խմբի կողմից): Միևնույն ժամանակ, կառավարությունը որպես կանոն շարունակում է իրականացնել լիցենզավորման գործառույթը: Մասնագիտական կազմակերպությունները լիցենզավորող մարմնին ներկայացնում են հաշվետվություններ վերալիցենզավորման ընթացակարգի շրջանակներում որակի հսկողության նպատակով կատարված ստուգումների արդյունքների վերաբերյալ, կարող են ուժը կորցրած ճանաչել կամ կասեցնել գործող լիցենզիաները՝ աուդիտի որակի անհրաժեշտ բարելավման պայման դնելով: Բացի այդ, կառավարությունը շարունակում է իրականացնել մասնագիտական կազմակերպության՝ իրեն պատվիրակված լիազորությունների գործադրման նկատմամբ վերահսկողությունը: Հայաստանի համար ոլորտի նման կազմակերպումը կարող է նպատակահարմար լինել, մասնավորապես՝ աուդիտի որակի հսկողության պրակտիկ գործառույթը պատվիրակելով ՀՀԱԱ-ին, որը կարող է ստուգումների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել ստեղծվելիք Հաշվապահների և աուդիտորների պալատին՝ լիցենզավորման մասին որոշումներ կայացնելու համար:

### **III. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ՝ կազմը և պրակտիկ կիրառությունը**

66. Այս բաժնի նպատակը Հայաստանում հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտների (ՀՀՀՀՍ) ու ՖՀՄՍ-երի միջև առկա

էական տարբերությունների («ստանդարտների գծով բաց») և ՀՀՀՅ-երին պարտադիր ֆինանսական հաշվետվությունների համապատասխանության («համապատասխանության գծով բաց») վերլուծությունն է՝ անհամապատասխանության համակարգային պատճառները բացահայտելու, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վրա նշված երկու բացերի հնարավոր բացասական ազդեցությունը գնահատելու նպատակով:

67. ՀՀՀՅ-երն ընդունվել են 2001 թվականին և հիմնված են նույն թվականի դրությամբ ՀՀՄՍ-երի ոչ էական փոփոխություններով տարբերակի վրա: Այդուհանդերձ, հետագայում ՀՀՀՅ-երը ոչ մի անգամ չեն վերանայվել, մինչդեռ ՀՀՄՍ-երը (ներկայումս՝ ՖՀՄՍ) 2001 թվականից ի վեր էապես փոխվել են: Հիմնական փոփոխությունները, որոնցով պայմանավորված է ՀՀՀՅ-երի և ՖՀՄՍ-երի միջև առկա այսպես կոչված «ստանդարտների գծով բացը», հետևյալն են.

- ՀՀՀՅ-երը բաժնենասնակցային վճարումների համար որևէ հատուկ կանոններ չեն սահմանում.
- ՀՀՀՅ-երը ընդհատված գործառնությունների վերաբերյալ առանձին դրույթներ չեն նախատեսում.
- ՀՀՀՅ-երը սեփական կապիտալի և պարտավորությունների տարբերակման համար արդիականացված մոտեցումներ չեն ներառում.
- ՖՀՄՍ-երի ներքո ապահովագրական պայմանագրերի նկատմամբ կիրառվում են որոշակի դրույթներ, որոնք ՀՀՀՅ-երով նախատեսված չեն.
- ՀՀՀՅ-երը չեն անդրադառնում ՀՀՄՍ 39-ի որոշակի զարգացումների (օրինակ՝ իրական արժեքով օպցիոն, ֆինանսական երաշխիքներ և այլն).
- Փոխարինելի պաշարների համար թույլատրվում է կիրառել ԱՄԱԵ մեթոդը կամ միջին կշռված արժեքի բանաձևը, իսկ ՎՄԱԵ բանաձևը, որ ՀՀՄՍ 2-ի 2003 թվականին ընդունված տարբերակից հետո ՖՀՄՍ-երով այլևս չի թույլատրվում, ՀՀՀՅ-երով դեռևս թույլատրված է.
- ՖՀՄՍ-երի ներքո դրամական հոսքերի հաշվետվությունը պատրաստվում է ուղղակի կամ անուղղակի մեթոդների կիրառությամբ, սակայն ՀՀՀՅ-երով անուղղակի մեթոդի կիրառությունը չի թույլատրվում:

ՀՀՀՅ-երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների օգտակարության վրա վերը նշված տարբերությունների ազդեցությունը՝ ՖՀՄՍ-երի համաձայն պատրաստվածների օգտակարության համեմատ, որոշ դեպքերում կարող է միանգամայն էական լինել: Նման տարբերության առկայությունն անհամադրելի է դարձնում ՀՀՀՅ-երի ու ՖՀՄՍ-

երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները և սահմանափակում ՅՅՅՅՍ-երով պատրաստվածների օգտակարությունն այն օգտագործողների համար, ովքեր ծանոթ չեն այդ ստանդարտներին: Մյուս կողմից, շատ դեպքերում «համապատասխանության գծով բացը» շատ ավելի լուրջ բացասական ազդեցություն է թողնում ՅՅՅՅՍ-երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների օգտակարության վրա, քան «ստանդարտների գծով բացը»:

68. «Ստանդարտների գծով բացի» մեկ այլ պատճառ է այն հանգամանքը, որ ուլորտի կարգավորողներն իրենց կողմից կարգավորվող կազմակերպությունների համար սահմանում են հաշվապահական հաշվառման բնագավառին առնչվող կանոններ, որոնք տարբերվում կամ հակասում են հաշվապահական հաշվառման գործող ստանդարտների պահանջներին: Հայաստանում բանկերը պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) և ՖՆ-ի կողմից համատեղ համաձայնեցված ընթացակարգերով՝ ՅՅՅՅՍ-երին համապատասխան կերպով: ԿԲ-ը, պահանջելով հանդերձ, որ ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվեն ՅՅՅՅՍ-երի համաձայն, հաստատել է մի շարք կանոնակարգեր ու հրահանգներ, որոնք տարբերվում կամ հակասում են ՅՅՅՅՍ-երի պահանջներին այնպիսի հարցերում, ինչպիսին է, օրինակ, վարկերի հնարավոր կորուստների դիմաց պահուստավորումը: Այս տարբերությունները շփոթության պատճառ են դառնում, ընկերությունների մոտ հարց առաջացնելով ներկայացվող հաշվետվությունների՝ ՅՅՅՅՍ-երին կամ պրոլոնգացիալ հաշվետվողականության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

**ՍԿՊՀ-ն գնահատում է համապատասխանության բացը՝ կատարելով հետևյալ ընտրանքը.**

- Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 4 փաթեթ, որոնք պատրաստված են ՅՅՅՅՍ-երի համաձայն. ընտրանքային ուսումնասիրության համար վերցվել են 2 ապահովագրական ընկերություն և 2 բանկ: Ընտրանքում ներառված ֆինանսական հաշվետվությունների բոլոր փաթեթները աուդիտորական ստուգման են ենթարկվել միջազգային աուդիտորական ցանցային կազմակերպությունների անդամ տեղական ընկերությունների կողմից: Աուդիտի արդյունքում բացասական եզրակացություն չի տրվել:
- Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 4 փաթեթ, որոնք պատրաստված են ՖՀՄՍ-երի համաձայն. ընտրանքային ուսումնասիրության համար ՍԿՊՀ-ի աշխատանքային խումբը վերցրել է 2 բանկ, 1 արդյունաբերական

ընկերություն և 1 առևտրի պալատ: Ընտրանքում ներառված ֆինանսական հաշվետվությունների բոլոր փաթեթները աուդիտորական ստուգման են ենթարկվել միջազգային աուդիտորական ցանցային կազմակերպությունների անդամ տեղական ընկերությունների կողմից: Աուդիտի արդյունքում 3 փաթեթի վերաբերյալ տրվել է դրական, իսկ 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

ՍԿՊՀ-ի աշխատանքային խումբը փորձել է ստանալ ՀՀՀՀՍ-երի համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների 15 փաթեթ, սակայն դրանցից միայն 4-ն են լիարժեք եղել:

### ***ՀՀՀՀՍ-երին համապատասխանությունը***

69. Ընկերությունները պարտավոր են Ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացնել տարեկան կտրվածքով ֆինանսական տեղեկատվություն, սակայն իրականում ԱԿԾ ներկայացվում են պարզապես որոշ կարևոր ֆինանսական ցուցանիշներ ու հարաբերակցություններ, բայց ոչ՝ լիարժեք ֆինանսական հաշվետվություններ: Բացի բաժին II.Ե-ում նկարագրված՝ բանկերի, ապահովագրական ընկերությունների և ցուցակված կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների որոշ, սահմանափակ ուսումնասիրությունից, ընկերությունների, դրանց ղեկավարների ու բաժնետերերի շրջանակից դուրս այդ ֆինանսական հաշվետվությունների կիրառությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Օրինակ, ֆինանսական հաշվետվությունները բանկերի կողմից վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս գրեթե կամ ընդհանրապես չեն օգտագործվում որպես հիմք. փոխարենը, բանկերը նախընտրում են տրամադրել գրավային ապահովածությամբ վարկեր: Այդուհանդերձ, որոշ փաստեր վկայում են այն մասին, որ վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ պահանջարկն ու դրանց օգտագործման մակարդակը ներկայումս աճման միտում ունեն: ՀՀՀՀՍ-երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերը հիշատակված 4 փաթեթների համար բնութագրական են անհամապատասխանության հետևյալ դեպքերը.

- Հարկային հաշվետվողականության, ֆինանսական գործիքների, ապահովագրական պայմանագրերի, հասույթի, վնասի, պահուստավորման մասով կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության չբացահայտումը.
- Ֆինանսական գործիքների կամ ապահովագրության համար ռիսկերի կամ դրանց կառավարման քաղաքականության չբացահայտումը.
- Հետաձգված հարկային պարտավորությունների չբացահայտումը.

- Հարկային վճարումների ոչ ճիշտ փոխհամաձայնեցումը.
- Հարկված շահույթի և հաշվապահական շահույթի հասկացությունները միմյանց հետ շփոթելը.
- Հաշվապահական հաշվառման բացահայտված քաղաքականության ներքո գույքը, շենքերն ու սարքավորումները ինքնարժեքով հաշվառելը այն դեպքում, երբ դրանց գծով փաստացի ձևավորված են վերագնահատման զգալի պահուստներ. ընդ որում, վերագնահատման հիմքերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվում:

70. Մի կողմից ՀՀՀՅՍ-երի համաձայն ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, իսկ մյուս կողմից՝ կորպորատիվ հարկերի հաշվարկման նպատակով հաշվապահական հաշվառման հիմնական հոդվածների բովանդակային հիմքերը շփոթելը, ՀՀՀՅՍ-երի ընկալման ցածր մակարդակի հետ համատեղվելով, ՀՀՀՅՍ-երին անհամապատասխանության պատճառ հանդիսացող թերևս հիմնական գործոնն է: Այն դեպքերում, երբ հարկային նպատակներով հաշվետվողականության կանոններն ու նորմերը տարբերվում են ՀՀՀՅՍ-երով սահմանվածից, հաշվետուների մի մեծ մասը կիրառում է առաջինը: Սա հանգեցնում է հաշվապահական կանխատեսումներին (քանի որ հարկային հաշվետվողականության նպատակներով հաշվարկներում սովորաբար կանխատեսումներ չեն թույլատրվում), ակտիվների և պարտավորությունների գնահատմանը (քանի որ հարկային հաշվետվողականության նպատակներով հաճախ պահանջվում է կիրառել բանաձևի վրա հիմնված մոտեցում, և պարտավորությունները ճանաչվում են միայն համապատասխան փաստաթղթային հիմքերի առկայության դեպքում) առնչվող ցանկացած ոլորտում էական անհամապատասխանությունների առկայությանը, ինչպես նաև հաշվեգրման սկզբունքի ոչ ճիշտ կիրառությանը:

***ՖՀՄՍ-երին համապատասխանությունը***

71. ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունները ընկերությունների, հիմնականում՝ բանկերի, ապահովագրական ընկերությունների և օտարերկրյա կապիտալով կազմակերպությունների կողմից պատրաստվում են կամավորության սկզբունքով: Նկատվել է, որ ընդհանուր առմամբ բանկերը ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս աուդիտորական ընկերությունների օժանդակությունից քիչ են օգտվում՝ ի համեմատություն այլ կազմակերպությունների, որոնք էապես օգտվում են այդ օժանդակությունից:



ՖՀՄՍ-երի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների համար բնութագրական են անհամապատասխանության հետևյալ դրսևորումները.

- Չետաձգված հարկային պարտավորությունների չբացահայտումը.
- Գույքի, շենքերի ու սարքավորումների վերագնահատման վերաբերյալ բացահայտումների ոչ ամբողջականությունը.
- Ընդհանուր առմամբ, էական դատողությունների ու կանխատեսումների չբացահայտումը.
- էական սխալների ճշտման հետևանքների չբացահայտումը:

72. Ընդհանուր առմամբ, ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստող ընկերությունները, այդ թվում՝ բանկերը և ապահովագրական ընկերությունները, զբաղվում են բավականին պարզունակ գործառնություններով, ուստի գործ ունեն համեմատաբար պարզ հաշվապահական ձևակերպումների հետ, որոնց դեպքում ՖՀՄՍ-երով նախատեսված ծավալուն բացահայտումների անհրաժեշտություն չի առաջանում: Օրինակ, ընկերություններից որևէ մեկը ոչ կուտակային համակարգի կենսաթոշակային սխեմաներով, բաժնեմասերի օպցիոններով կամ ընդհատված գործառնություններով չի զբաղվում, ուստի համապատասխանաբար ՀՀՄՍ 19-ը, ՖՀՄՍ 2 և ՖՀՄՍ 5-ը դրանց համար կիրառելի չեն: Ընկերությունների մեծ մասը զբաղվում է գործունեության միայն մեկ տեսակով և աշխարհագրական մեկ սեգմենտում, ուստի ՀՀՄՍ 14-ը նույնպես կիրառելի չէ: Անգամ ֆինանսական գործիքների վերաբերյալ բացահայտումները սահմանափակ են, քանի որ ընկերությունների մեծամասնությունը ածանցյալ գործիքներից չի օգտվում:

## **IV. Աուդիտի ստանդարտներ՝ կազմը և պրակտիկ կիրառությունը**

### *Ստանդարտների գծով բացը*

73. Հայաստանում աուդիտի ստանդարտների գծով բաց սկզբունքորեն առկա չէ, քանի որ Աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ) ընդունվել և աուդիտորների կողմից կիրառվում են որպես Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներ (ՀՀԱՍ): Այդուհանդերձ, ինչպես հաշվապահական հաշվառման ստանդարտների դեպքում, ԱՄՍ-երի թարգմանության և որպես ՀՀԱՍ-եր ընդունման միջև ընկած ժամանակային միջակայքերը հանգեցնում են ԱԵՄՍԻ-ի կողմից հրապարակված վերջին ԱՄՍ-

երի և Հայաստանում աուդիտորների կողմից կիրառվող ստանդարտների միջև տարբերություններին:

74. Հաշվի առնելով Հայաստանում աուդիտորների առջև ծառայած՝ աուդիտի ստանդարտների կիրառությանն առնչվող լուրջ խնդիրները, հավանական չէ, որ աուդիտի ստանդարտներին համապատասխանելու և բարձրորակ աուդիտ իրականացնելու հարցում առկա դժվարությունների հիմնական պատճառը ԱՄՍ-երի և ՀՀԱՍ-երի միջև տարբերությունները լինեն: Մյուս կողմից, ԱԵՄՍԽ-ն, որ սահմանում ու հրապարակում է ԱՄՍ-երը, ներկայումս իրականացնում է այսպես կոչված «Թափանցիկության ծրագիրը», և համեմատաբար մոտ ապագայում ծրագրի ավարտից հետո մի շարք ԱՄՍ-երում կկատարվեն զգալի փոփոխություններ: Այս վերանայված ստանդարտները հրապարակվելուց հետո ՀՀԱՍ-երի ստանդարտների գծով բացը կդառնա էական, և այդ խնդրին պետք է որոշակի լուծում տրվի:

#### *Համապատասխանության գծով բացը*

75. Ընտրանքային կարգով ուսումնասիրված ութ ֆինանսական հաշվետվություններից (մանրամասները տես ստորև) յոթը աուդիտի էին ենթարկվել միջազգային աուդիտորական ցանցային ընկերությունների «Մեծ քառյակին» պատկանող տեղական կազմակերպություններից մեկի, իսկ ութերորդը՝ համանման մեկ այլ ընկերության անդամ տեղական կազմակերպության կողմից: Աուդիտի եզրակացություններից միայն մեկն էր բացասական՝ պայմանավորված այն հանգամանքով, որ աուդիտի ենթարկված կազմակերպությունը չէր բացահայտել կառավարությունից որպես շնորհ ստացած հողի իրական արժեքը՝ վերագնահատումն ավարտած չլինելու պատճառով: Ըստ աուդիտի եզրակացությունների, ընտրանքային կարգով ուսումնասիրված ֆինանսական հաշվետվություններում որևէ լուրջ թերություններ չեն հայտնաբերվել:

76. Հայաստանի մի շարք աուդիտորական ընկերություններում աշխատող աուդիտորների հետ քննարկումներից պարզ է դառնում, որ ԱՄՍ-երին համապատասխանության մակարդակը ընկերությունից ընկերություն զգալիորեն տարբերվում է, և որ դա ինչ-որ չափով պայմանավորված է աուդիտորական աշխատակազմի համար հասանելի ռեսուրսների մակարդակով, նրանց փորձով ու ստացած ուսուցմամբ, ինչպես նաև ընկերությունների կողմից կիրառվող աուդիտի մեթոդաբանությամբ: ԱՄՍ-երի ստանդարտների կիրառության համար աուդիտորը պետք գնահատի աուդիտի ենթարկվող կազմակերպության ռիսկերն ու ներքին հսկողությունը, դրա հիման վրա կազմի աուդիտի ռազմավարություն և աշխատանքային ծրագիր՝

կազմակերպության համակարգերը, գործառնություններն ու հաշվեկշռային ցուցանիշները ստուգելու համար, ինչը նրան թույլ է տալիս ձեռք բերել աուդիտի մասով բավարար ու պատշաճ հիմքեր՝ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք հայտնելու համար: Վերոհիշյալ քննարկումներից պարզ դարձավ, որ միջազգային աուդիտորական ցանցային ընկերությունների անդամ տեղական կազմակերպությունները որպես կանոն ունեն պատշաճ ուսուցում ստացած անձնակազմ, որն օգտվում է ցանցի կողմից մշակված, ԱՄՍ-երին համապատասխանող ու պարբերաբար թարմացվող աուդիտի տեխնոլոգիաներից: Մյուս կողմից, փոքր աուդիտորական ընկերությունները կամ անհատ աուդիտորները ջանքեր են գործադրում ԱՄՍ-երի փոփոխություններից հետ չմնալու համար և կարող են հնարավորություն չունենալ օգտվել աուդիտի որևէ կանոնավոր, ԱՄՍ-երին համապատասխանող մեթոդաբանությունից: Տեղական ավելի մեծ աուդիտորական ընկերությունները գտնվում են այս երկու հակադիր կողմերի միջև՝ միջանկյալ դիրքում:

## **V. Ֆինանսական հաշվետվողականության որակի վերաբերյալ կարծիքները**

77. Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերը վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելիս չեն հիմնվում պոտենցիալ վարկառուների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վրա: Բանկերի շրջանում ձևավորված է կարծիք, որ Հայաստանում ֆինանսական հաշվետվությունները ցածրորակ են և բավարար հիմք չեն կարող հանդիսանալ պոտենցիալ վարկառուների ֆինանսական վիճակը գնահատելու համար: Թեպետ ընկերություններից հաճախ պահանջվում է ներկայացնել իրենց ֆինանսական հաշվետվությունները՝ որպես վարկի ստացման համար դիմելու գործընթացի բաղկացուցիչ մաս, բանկերը վարկավորման որոշումներ կայացնում են հիմնվելով այլ գործոնների, այդ թվում՝ գրավի արժեքի, տվյալ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ կանխատեսումների և տեղերում կատարվող այցելությունների վրա: Ընկերությունների՝ ՀՀՀՅՍ-երով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները բանկերի կողմից ընկալվում են զուտ որպես դրանց հարկային պարտավորությունների պատշաճ կատարման նշան:

78. Անհատ աուդիտորի պրակտիկայով զբաղվողների կողմից իրականացված աուդիտի վերաբերյալ կարծիքները նույնպես անբարենպաստ են: Շուկայում գերիշխում է այն կարծիքը, որ փոքր աուդիտորական ընկերությունների կամ անհատ աուդիտորների կողմից ստուգված

Ֆինանսական հաշվետվությունները հաճախ չեն բավարարում որակի ստանդարտներին, որոնք թույլ կտային վստահել դրանցում արտացոլված ֆինանսական տեղեկատվությանը:

## VI. Ոլորտային քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

79. Սույն ՍԿՊԶ-ի գլխավոր նպատակը ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածներում հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվողականության ու աուդիտի պրակտիկայի զարգացման գործում երկրի իշխանություններին և շահագրգիռ այլ կողմերին օժանդակելն է՝ մատնանշելով Հայաստանում որոշակի ռազմավարական նպատակների իրագործման անհրաժեշտությունը, որոնց թվում են.

- Գործարար միջավայրի բարելավումը, մասնավոր հատվածում տեղական և օտարերկրյա ուղղակի ու պորտֆելային ներդրումների խթանումը.
- Եվրոպական և համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրմանն օժանդակումը.
- Բանկային ու ոչ բանկային ֆինանսական հատվածների կայունության և մրցունակության ամրապնդումը, վարկերի մարման հետ կապված խնդիրներով ու անբավարար կապիտալիզացիայով պայմանավորված ճգնաժամերի ռիսկի նվազեցումը.
- Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկություններում թափանցիկության ավելացումը, ինչը բաժնետերերին ու հանրությանը հնարավորություն կընձեռնի գնահատել ղեկավարության գործունեությունն ու ազդել նրա վարքագծի վրա.
- Ֆինանսական հաշվետվողականության, հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի նորմատիվ և օրենսդրական դաշտի համապատասխանեցումը լավագույն միջազգային պրակտիկային.
- ՓՄՁ-երի համար վարկային միջոցների մատչելիության բարձրացումը՝ խրախուսելով գրավի վրա հիմնված վարկավորման որոշումներից անցումը պոտենցիալ վարկառուների ֆինանսական ցուցանիշների վրա հիմնված որոշումներին՝ դրանով իսկ նպաստելով ՓՄՁ-երի հատվածի աճին, և
- Նպաստելը, որ տարբեր տեսակի ու չափերի ընկերությունների նկատմամբ կիրառվող ֆինանսական հաշվետվողականության ու աուդիտի կանոնները համարժեք լինեն այդ ընկերությունների ու

նրանց ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների պահանջներին:

Չփորձելով տալ բարեփոխումների իրականացման քայլերի հաջորդականության տակտիկական նկարագիրը, սույն հաշվետվությամբ ներկայացվում են ոլորտային քաղաքականության վերաբերյալ առաջարկներ՝ հաշվապահական հաշվառման բնագավառի բարեփոխումների իրականացման և, ի վերջո, կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության որակի բարձրացման գործընթացին օժանդակելու համար:

80. **Սույն ՍԿՊԳ-ով ներկայացվող առաջարկները միմյանց հետ փոխկապակցված ու փոխլրացնող են. դրանք որպես մեկ ամբողջություն նախատեսված են Հայաստանում ֆինանսական հաշվետվողականության միջավայրի բարելավման համար:** Օրինակ, հաշվապահական հաշվառման լավ ստանդարտների կիրառությունը կվտանգվի, եթե պրակտիկ հաշվապահները չհասկանան, թե դրանք ինչպես պետք է վերածել իրենց հաշվառման փաստաթղթերում կոնկրետ հաշվապահական ձևակերպումների, կամ՝ կարգավորման խիստ դաշտը դժվար թե արդյունավետ լինի, եթե պատշաճ կերպով չի կիրարկվում: Բացի այդ, որոշ առաջարկների ազդեցությունն անմիջապես տեսանելի չի լինում, սակայն դրանք այնուամենայնիվ պետք է դասվեն առաջնահերթ գերակայությունների թվին, եթե ցանկանում ենք ողջամիտ ժամկետներում Հայաստանում ֆինանսական հաշվետվողականության միջավայրը բարելավելով հասցնել միջազգային ստանդարտներով սահմանված մակարդակի:

81. **Ոլորտային քաղաքականության վերաբերյալ սույն հաշվետվությամբ ներկայացված առաջարկները հիմնված են այն ենթադրության վրա, որ հաշվապահության և աուդիտի մասնագիտությունների համակողմանի արդիականացումը և միջազգային ստանդարտներին համապատասխան, թափանցիկ ֆինանսական տեղեկատվության պատրաստմանը նպաստող գործարար միջավայրի ձևավորումը դասվում են երկրի երկարաժամկետ նպատակների թվին:** Ինչպես լուսաբանված է սույն հաշվետվությունում, այդ նպատակներին հասնելու համար պահանջվում է շարունակաբար բարեփոխել ու բարելավել Հայաստանի օրենսդրական դաշտը, ինստիտուտները, հաշվապահության և աուդիտի մասնագիտությունները, ինչպես նաև երկրում փոխել գործարար մշակույթն ու կրթական համակարգը: Այդուհանդերձ, քաղաքականությունները չպետք է մշակվեն ու գործարկվեն՝ առանց պատշաճ ուշադրություն դարձնելու երկրի՝ նման քաղաքականություններ իրականացնելու հնարավորություններին (ինչպես կարողությունների, այնպես էլ ռեսուրսների տեսանկյունից). համեմատաբար մեղմ, սակայն կոշտ ու հետևողական կերպով կիրառվող

կանոնն ավելի նախընտրելի է, քան խիստ, բայց ոչ կիրարկելին, քանի որ մեղմ կանոնը կարելի է աստիճանաբար, իրավիճակի զարգացմանը զուգընթաց խստացնել: Ոլորտային քաղաքականության վերաբերյալ ստորև ներկայացվող առաջարկները, հավակնոտ լինելով հանդերձ, կարճաժամկետ ու միջնաժամկետ հատվածում իրագործելի են և կնպաստեն Հայաստանի երկարաժամկետ նպատակների իրագործմանը: Դրանք վերաբերում են երեք հիմնական ոլորտների.

- Կանոնակարգման դաշտ.
- Ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման միջոցառումներ.
- Մասնագիտական կրթություն և ուսուցում:

82. Ներկայացվող առաջարկները իրականացման տեսանկյունից ակնկալում են ամբողջական մոտեցման կիրառություն: Հայաստանը պետք է ստեղծի բազմաճյուղ Ազգային վերստուգիչ հանձնաժողով (ԱՎՀ), որը կղեկավարվի որևէ բարձրաստիճան պաշտոնյայի, լավագույն դեպքում՝ որևէ փոխնախարարի կողմից, հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում բարեփոխումների առաջատարի ու համակարգողի դերը ստանձնելու նպատակով: ԱՎՀ-ն ոլորտային քաղաքականության պատասխանատուներին և կարգավորողներին խորհրդատվություն կտրամադրի ներկայացվող առաջարկների իրականացման վերաբերյալ: Այլ երկրների հաջող փորձի հիման վրա, սույն հաշվետվությամբ առաջարկվում է, որպեսզի ԱՎՀ-ն մշակի Երկրի ռազմավարություն և Երկրի գործողությունների մանրամասն պլան, որոնցով հստակ կսահմանվեն ձեռնարկվելիք հիմնական քայլերը, կբաշխվեն բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ պարտականությունները: Նշված պլանը պետք է ներառի բարեփոխումների հաջող իրականացման անհրաժեշտ միջոցները թվարկող ու ըստ հոդվածների ներկայացված բյուջե, և կառավարությունը, ոլորտային քաղաքականության պատասխանատուներն ու զարգացման գործընկերները պետք է համատեղ աշխատեն այդ միջոցներն ապահովելու ուղղությամբ՝ Հայաստանում ֆինանսական տեղեկատվության որակն ու հասանելիությունը բարելավելու ընդհանուր նպատակի իրագործման համար:

## Ա. Կանոնակարգման դաշտ

83. Ֆինանսական հաշվետվողականության ու աուդիտի կանոնակարգման և օրենսդրական դաշտի հետ կապված՝ մենք առաջարկում ենք հետևյալը.

- Սահմանել ֆինանսական հաշվետվողականության եռաստիճան համակարգ՝ հանրային շահ ներկայացնող ընկերություններից (ՀՇՆԸ) պահանջելով լիարժեքորեն համապատասխանել ՖՀՄՍ-երին (այլ ոչ թե,

ՀՀՀՀՍ-երին, ինչպես ներկայումս է), փոքր և միջին ձեռնարկություններից (ՓՄՁ)՝ մասնավոր ընկերությունների համար սահմանված ՖՀՄՍ-երին (երբ վերջիններս առկա լինեն, և դրանց բարեհաջող ներդրման համար տրվի բավարար ժամանակ), իսկ միկրոձեռնարկություններից պահանջելով ապահովել բացառապես հարկային նպատակներով ներկայացվող հաշվետվություններ: Նշենք, որ ՀՇՆԸ-երի և ՓՄՁ-երի սահմանումները պետք է համապատասխանեն Հայաստանի տնտեսության զարգացման ներկայիս մակարդակին: Բոլոր ձեռնարկությունների համար, ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվողականությունը և կարգավորման նպատակով ներկայացվող (այդ թվում՝ հարկային) հաշվետվությունները պետք է կառուցվեն այնպես, որ դրանց միջև տարբերությունները սահմանափակվեն ոլորտի պետական քաղաքականության ողջամիտ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ չափով, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել լրացուցիչ հաշվետվողականության բեռը և պետական կարգավորման պատկան մարմինների իրավասությունների կիրառումն ուղղորդել շուկայում հասանելի հրապարակային ֆինանսական տեղեկատվության որակի բարձրացմանը:

- Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՍ) փոխարինել ՖՀՄՍ-երի արդիական թարգմանությամբ և ապահովել ՖՀՄՍ-երի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանության կայուն գործընթաց՝ նկատի ունենալով լիարժեք ՖՀՄՍ-երի կիրառման նպատակահարմարությունը և հաշվի առնելով հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի այլ բարեփոխումների համեմատական կարևորությունը:
- Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտները (ՀՀԱՍ) փոխարինել ԱՄՍ-երի արդիական թարգմանությամբ և ապահովել ԱՄՍ-երի ապագա փոփոխությունների ժամանակին թարգմանության կայուն գործընթաց:
- ՓՄՁ-երի՝ հաշվետվողականության նոր պահանջներին անցման վերջնաժամկետն ընտրել այնպես, որ այն համապատասխանի ներկայումս նախագծային մշակման փուլում գտնվող՝ ՀՀՄՍԽ-ի կողմից «Մասնավոր ընկերությունների համար ՖՀՄՍ» ստանդարտի հրապարակման ու ներդրման ժամկետներին: Նշված ստանդարտը ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակվելուց հետո՝ ՓՄՁ-երին անհրաժեշտ է տալ բավարար ժամանակ (իսկ հնարավորության դեպքում նաև՝ ուսուցման տարբերակներ, ինչը ներկայացված է ստորև) դրա կիրառությունն ապահովելու համար:
- Վերանայել ֆինանսական հաշվետվողականության կանոնակարգման դաշտը, մասնավորապես. ա) ապահովել ներկայումս ստեղծվող

ընկերությունների ռեգիստրի իրավասությունների բավարար շրջանակ ու կարողությունների պատշաճ մակարդակ, իսկ իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջին ենթակա ընկերությունների մասով սահմանել որոշակի ժամկետ այդ հաշվետվությունները ռեգիստրին ներկայացնելու համար, որոնք ռեգիստրը, իր հերթին, հասանելի կդարձնի հանրության համար՝ դրանք ժամանակին ու ամբողջական կերպով հրապարակելով, և բ) պարտադիր աուդիտի ենթակա ընկերություններում ներկայիս «Վերստուգիչ հանձնաժողովները» փոխարինել «Աուդիտի հանձնաժողովներով»:

- Վերանայել աուդիտի կանոնակարգման դաշտը՝ Ֆինանսների նախարարության, որպես հանրային հսկողություն իրականացնող մարմին հանդես եկող ստեղծվելիք Հաշվապահների և աուդիտորների պալատի, ինչպես նաև աուդիտորների մասնագիտական մարմինների միջև աուդիտի բնագավառի կարգավորման պարտականությունների արդյունավետ բաշխում կատարելու նպատակով:

## **Բ. Ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման միջոցառումներ**

**84. Կորպորատիվ ֆինանսական հաշվետվողականության օժանդակմանն ուղղված ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացման միջոցառումների հետ կապված՝ մենք առաջարկում ենք հետևյալը.**

- Ֆինանսների նախարարության (ՖՆ) հաշվապահական հաշվառման ու աուդիտի մասնագիտության կարգավորման որոշակի գործառույթներ պատվիրակել մեկ կամ մի քանի մասնագիտական կազմակերպությունների: Ըստ այդմ, ՖՆ-ը կարող է վերանայել իր դերը՝ ստանձնելով մասնագիտության նկատմամբ հսկողությունն իրականացնողի գործառույթը, հաշվի առնելով նաև նախատեսվող Հաշվապահների և աուդիտորների պալատի ստեղծմամբ ընձեռված հնարավորությունները: Ներկայումս ՖՆ-ի և ՀՀԱԱ-ի գործառույթներն այդ տեսանկյունից մի շարք առումներով կրկնորդում են միմյանց, և նման պատվիրակումը թույլ կտա ապահովել ռեսուրսների ավելի արդյունավետ տեղաբաշխում: Բացի այդ, ՖՆ-ի կողմից առավել հսկողամետ դերի ստանձնումն ավելի է համապատասխանում ԵՄ-ի նոր Ութերորդ դիրեկտիվին, որի առանձին դրույթներով կարգավորվում է մասնագիտության նկատմամբ պետական հսկողությունը:
- Ֆինանսների նախարարությանն անհրաժեշտ է սահմանել հստակ ու կոնկրետ չափանիշներ և նպատակներ, որոնց պետք է բավարարի մասնագիտական կազմակերպությունը՝ պետության կողմից որպես



ման գործառույթներ իրականացնելու իրավասու մարմին ճանաչվելու համար:

- Ֆինանսների նախարարությանն անհրաժեշտ է բարելավել աշխատակիցների ներգրավման և ուսուցման իր ծրագրերը, ինչը թույլ կտա ապահովել աշխատակիցների՝ իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը: Ֆինանսների նախարարությունը պետք է ներդնի գործուղումների և փոխարինումների ծրագրեր՝ գիտելիքների փոխանցման, արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ հմտությունների ու բանիմացության ձևավորման նպատակով:
- ՀՀԱԱ-ին անհրաժեշտ է գործունեություն ծավալել բուհական հատվածում իրազեկման ուղղությամբ՝ ուսանողներին խրախուսելով ուսումնասիրել հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառը, բարելավելով այդ մասնագիտությունների ու ՀՀԱԱ-ի վերաբերյալ նրանց տեղեկացվածությունը: ՀՀԱԱ-ն պետք է բուհերի հետ համագործակցի՝ ՀՀԱԱ-ի մասնագիտական քննությունների ստորին աստիճաններից ազատման տարբերակները հնարավոր դարձնելու նպատակով: Բացի այդ, ՀՀԱԱ-ին անհրաժեշտ է գործունեություն ծավալել կորպորատիվ հատվածում իրազեկման ուղղությամբ՝ ընկերություններին տեղեկացնելով այն օգուտների մասին, որ նրանց կարող են բերել ՀՀԱԱ-ի հավաստագրված անդամները: Շուկայական ճանաչումը բարելավելու ուղղությամբ քայլերի ձեռնարկումը ՀՀԱԱ-ին կօգնի զարգացնել մասնագիտությունը, ընդայնել իր անդամների կազմը և անցնել ինքնաֆինանսավորման:

#### **Գ. Մասնագիտական կրթություն և ուսուցում**

85. Մասնագիտական և այլ մակարդակներում հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի կրթության և ուսուցման բարելավմանն ուղղված գործառնությունների հետ կապված՝ մենք առաջարկում ենք հետևյալը.

- Ձեռնարկել միջոցառումներ մասնավոր և պետական բուհերում հաշվապահական հաշվառման ու աուդիտի կրթական ծրագրերի միջև առկա որակական ճեղքվածքը կրճատելու ուղղությամբ: Ներկայումս դասախոսների պատրաստվածության մակարդակի, հաշվապահական հաշվառման բնագավառի պարտադիր ուսուցանվող առարկաների քանակի ու տեսակների, բուհական ծրագրերի շուկայական ուղղվածության միջև առկա տարբերությունների արդյունքում պետական բուհերի շրջանավարտները կարող են հետ մնալ մասնավորների շրջանավարտներից, անկարող լինել բավարարելու Հայաստանի աճող տնտեսության և հաշվապահական հաշվառման ու

աուդիտի զարգացող միջավայրի ի հայտ բերած պահանջներն ու կարիքները:

- Պետական բուհերին անհրաժեշտ է շարունակել աշխատանքների իրականացումը՝ մասնավոր հատվածի, կարգավորման մարմինների և մասնագիտական կազմակերպությունների հետ իրենց կապերի զարգացման ուղղությամբ: Պետական բուհերում կրթությունը Հայաստանի շուկայի կարիքներին ավելի միտված դարձնելու նպատակով, պետական բուհերը պետք է ի մի բերեն դասախոսների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների տարբեր խմբերի (աուդիտորական ընկերություններ, ձեռնարկություններ և այլն), մասնագիտական կազմակերպությունների՝ ինչպիսին է ՀՀԱԱ-ն և Ֆինանսների նախարարության ու Կենտրոնական բանկի ներկայացուցիչների ջանքերը՝ նպաստելով այս բոլոր խմբերի միջև երկխոսության կայացմանը: Խորհրդատուների այս բազմակողմ խումբը պետք է պետական բուհերին աջակցի այն թեմաների ու հարցերի մշակման և հետագա ստանդարտացման գործում, որոնք հաշվապահական հաշվառման ու աուդիտի գծով պետական բուհերի դասախոսները ներառում են իրենց դասընթացներում: Բացի այդ, խորհրդատուների այս խումբը պետք է պետական բուհերին օժանդակի հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի դասընթացների այն քանակն ու տեսականին բնորոշելու հարցում, որոնց մասնակցությունն ուսանողների համար կլինի պարտադիր՝ տվյալ բուհը հաջողությամբ ավարտելու համար:
- Իրականացնել «դասավանդողների վերապատրաստման» կայուն ծրագիր՝ դասավանդողների հմտությունների ու գիտելիքների արդիականացման համար: Այս ծրագիրը պետք է կենտրոնանա ոչ միայն դասախոսների հմտությունները հաշվապահական հաշվառման ու աուդիտի այսօրվա միջավայրի համեմատ արդիականացնելու, այլև՝ եվրոպական և արևմտյան բուհերի հետ երկարաժամկետ հարաբերություններ հաստատելու վրա, ինչը թույլ կտա ապահովել հայաստանցի դասախոսների գիտելիքների արդիականացման կայուն համակարգի ձևավորումը (օրինակ՝ խորհրդատուների, միջազգային փոխանակման ծրագրերի միջոցով): Քանի որ այս խնդիրը բնութագրական է տարածաշրջանի բոլոր բուհերի համար, Հայաստանը պետք է դիտարկի հարևան երկրների բուհերի հետ համագործակցության հնարավորությունները՝ «դասավանդողների վերապատրաստման» կայուն տարածաշրջանային ծրագիր ստեղծելու նպատակով:
- Ապահովել հայաստանյան բուհերում շարունակական ու ընդլայնվող ջանքերի գործադրումը՝ դասախոսական կազմը հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում համապատասխան պրակտիկ փորձ ունեցող դասախոսներով համալրելու նպատակով: Հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառի գիտելիքները

աշխատատեղում կիրառելու հմտությամբ օժտված դասախոսները կարող են ուսանողներին ավելի լավ պատրաստել պրոֆեսիոնալ հաշվապահի և/կամ աուդիտորի իրենց ապագա դերին: Բուհերը պետք է փորձեն նաև հաշվապահական հաշվառման ու աուդիտի գծով իրենց դասախոսներին խրախուսել վերցնելու տարեկան արձակուրդներ՝ կազմակերպությունների հաշվապահական հաշվառման բաժիններում, աուդիտորական ընկերություններում ու պետական մարմիններում՝ աշխատելու միջոցով հաշվապահական հաշվառման ու աուդիտի բնագավառում իրենց գիտելիքները թարմացնելու և բարելավելու համար: